88
Z 80

357

8



~~429~~
3219
2004

3481



ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ
Հ. Հ.
ԳՐԱԴԱՐԱՆ

1002
5454

ՍԻԴՐՈՆԻՈՍԻ

# ՀՈՇԻՈՍԻ

ԵՂԵՐԵՐԳՈՒԹԻՒՆՔ

429

ՍԻԴՐՈ՛ՆԻՈՍԻ

# ՀՈՌԻՈՍԻ

Ի ՉԱՐՉԱՐԱՆՍՆ ՔՐԻՍՏՈՍԻ

ԹԱՐԳՄԱՆԵԱԼ

Հ· ՄԱՆՈՒԷԼ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՋԱԽՋԱԽԵԱՆ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆԻՑ

Ի ՎԷ՛ՆԷՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1830

Ի 11 ՅՈՒԼԻՍԻ

ԱՌ ՕԾԵԱԼՆ

ՅԱՌԱՋԻՆ ՀԱՅՐԱՊԵՏ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍԻ

# ԳԵՐԱԳԱՀ ՄԵՏՐԱՊՕԼԻՏ

ԵՒ ՊԵՏ

ՀԱՅՈՑ ՈՒՂՂԱՓԱՌԱՑ

ՏԷՐ

# ԱՆՏՈՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՆՈՒՐԻՃԱՆ

Ի ՎԵՆԵՏԿԵԱՆ

ՈՒԽՏԷՆ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

ՍԻՐՈՅ ԵՒ ՄԵԾԱՐԱՆԱՑ ԵՒ ԽՆԴՈՒԹԵԱՆ

ԱՆԵՂԾ ԱՐՁԱՆ

# ԱՄԵՆԱՊԱՏԻՒ

## ԱՐՀԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ

Ոչ նիրհեն Երկինք առ ողորմ կական,
Զոր արտասուաթոր հեծէ լուռ բերան.
Շնորհեաց Արամայ ՀՈՎՈՒԱՊԵՏ ԱՐՀԻ,
Հովուել զոչխարակս 'ի վայր դալարի:
Եւ Սեբաստացւոյն ահա դօս ոսկերք
Թընդան 'ի շիրմին, լեզուն պարզի յերգ.
„ Ողջամբ քո ծագումն, ԱՅՑԵԼՈՒԴ ազգիս,
Յոր առ կենդանեօք հեղի ես լալիս:”
Յայս ձայն հայրենի՝ Որդիքն հարազատ
Դոփեն 'ի կայտառ յերգոց 'ի դըրուատ,
Ըզ սըրտից զեղուած ու հողմոց ցընդել
Այլ դարուց անջինջ յայս Արձան կանգնել:

Տե՛ս դու, ո՛վ մարդ, զինչ վասն քո կրեմ յանձին,
Չիք ցաւ հանդէտ այնըմ որով ես չարչարիմ.
Գոչեմ առ քեզ, որ փոխանակ քո մեռանիմ,
Տե՛ս ըշպատիժ պատուհասից որով տանջիմ,
Տե՛ս ըզբեւեռ ոտից ձեռաց որով խոցիմ։
Թէպէտ այսչափ են դըժընդակք ցաւք սրտաքին,
Բայց դառնագոյն ես խմանամ ըզկոծ ներքին,
Յորժամ այսչափ ապախտաւոր 'ի քեզ հայիմ։

ՍՈՒՐԲ ԲԵՌՆԱՐԴՈՍ

# ԵՂԵՐԵՐԳՈՒԹԻՒՆ

## ԱՌԱՋԻՆ

### ՍԷՐՆ ՅԱՂԹԱՆԱԿԷ ԱՍՏՈՒԾՈՅ

Ո՛ն ըզՍիրոյն ուսիք զհանդէս
Բան զժամանակ երէց 'ի յէս ,
Եւ միշտ Էին 'ի դար անկէտ
Սա գոյակից անեղապէս ։

Թէ և ոչ ինչ գոյ զայգ Էին ,
Բայց նա իշխէ տիրէ սըմին .
Եւ հրամայէ բազում անգամ
Որպէս Նըկուն տեղ տալ Նըմին ։

Նախ քան զերկիր զափըն ծովուն ,
Եւ քան զոլորտ երկնից շարժուն ,
Յորժամ ոչ ինչ կայր տիպ իրաց ,
Ոչ տիեզերք յիւրում զարդուն ,

Ասաց սըմա Մեր տիրաբար ,
Արա՛ զերկիր զաստեղաց պար .
'Ի նոյն աստեղք շողշողէին ,
Մեծազանգուած հող տարրանայր ։

Անտի և այսր անշեղելի
Պայծառ եթեր զիւրև պատի ,
'Ի մէջ օդոյն ինքնախաղխուխ
Մ՛ընայ 'ի կախ գընդակ երկրի ։

Ետես նա զազգ մահկանացուաց ,
Ընկճեալ նըկուն 'ի պատրանաց
Եղեռնագործ բռնաւորին ,
Կըրել զանտար վիշտ կապանաց .

Եւ դունդագունդ յափըշտակեալ
Որս 'ի գեհեան գահավիժեալ ,
Եւ դառնաղէտ կոտորածոյն
Ոչ կատարած ոչ դիմակալ ։

Մեր կարեկից զայս ոչ տարաւ ,
Առ Բարձրելոյն բողոք կալաւ .
Դու ինքն , ասէ , քննախընդիր
Ըզգործ ձեռացդ ա՛ռ ընդ բազկաւ ։

Այս իւր պատուէր . անսայ Աստուած ,
Եւ զիւր Թողու գահ աստեղաց .
Եւ իջանէ յօժարափոյթ
'Ի մեր երկիր օտարագնաց ։

Վայելչութիւն մեծ այսպիսի
Զգեցաւ մարմին մանկանացուի,
Եւ յանձն էառ խոնարհաբար
Լինել ծընունդ մօր աղքատի։

Ոչ ամաչեաց ըղձիւ բառնալ
Յանբանից լուր առ իւր կացեալ,
Ոչ ամաչեաց և ընկողմնիլ
Յանարգ մըսուրն ծըղօտ բարդեալ։

Ո՞վ ոչ գիտէ զօրհաս անտար
Կըրեալ 'ի փայտ դառնաչարչար.
Ո՞վ ոչ գիտէ զանյաղթն Աստուած
Յաղթեալ մահուամբ ըստըրկաբար։

Սէր հրամայեաց զայս ամենայն,
Սա տայ երկնից ըզպատուիրան.
Եւ ոչ փոքր ունի արքայութիւն,
Քան զայն որում բընաւք անսան։

# ԵՂԵՐԵՐԳՈՒԹԻՒՆ

## ԵՐԿՐՈՐԴ

---

### 'Ի ՄՇՏԱԲՈՐԲՈՔ ԵՒ ՑԱՆԲԱՒ ՑԱՆԿՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՌ 'Ի ՉԱՐՉԱՐԱՆՍ

Ընծեամ դու Տէր կառս յաղթական ,
Ա՛ծ ըղձալուխք ոստ դափնիդեան .
Եւ 'ի վերայ անյաղթելւոյն
Նշա՛ն կանգնեա յաղթողական ։

Նոյն ինքն Աստուած քեզ ընկճեցաւ ,
Իւրում հրամանաց հըլու գըտաւ .
Զաքսոր քան զիւր արքայութիւն
Նախամեծար համարեցաւ ։

Առ 'ի պահել զիւրըն գործած
Ամենայնի համբեր ժուժեաց .
Այլ եւ ըզմեզ զորդիս մահու
Գին մեծ վարկաւ իւրոց կենաց ։

Մ՛ի գութ անճառ . որչափ լուցկի
Նա բորբոքեաց յիւրում սրտի .
Բանիցս անգամ փափագ մահուան
Եղև 'ի նմա և որպիսի ։

Հեզ ոչ այնպէս յոգւոց հանէ
Եւ արձակուրդ արգահատէ ,
Զոր կաշկանդեալ արգելարան
'Ի խիստ գելոց պարաւանդէ ,

Եւ ոչ այնպէս արտասահման
Յափըն լըկեալ 'ի սարմատեան ,
Ընձկայ 'ի հնար վերադարձի
'Ի հայրենեանըն վառարան ,

Որպէս ինքնին նա վառեցաւ ,
Սիրով վըշտաց կաթոգնեցաւ ,
Զերծուլ ըզմեզ յարժան մահուանց ,
Իւրով մահուամբ անպարտակրաւ ։

Այս էր փափաք չև երկնելոյն
Այս 'ի ծննդեան 'ի յայր մըսրոյն ,
Եւ 'ի վերայ խիստ ծըղօտի
Այս իւր փափաք ընկողմնելոյն ։

Նա ձիչ բառնայր . կարծեաց իւր մայր
Ըզցուրտ նըմին վընասաբար ,
Կամ ըզփափկիկ ըզկող նորին
Շիթեալ խայթիւք յարդիցն 'ի սայր ։

Որպէս զիարդ ձեռընհաս է ,
Ի զխոտ ըզյարդ քընքշեալ հարթէ .
Որպէս զիարդ նա ձեռընհաս ,
Պատըսպարեալ ըզցուրտ մեղմ ։

Զուր ջանաս , մայր գըթած և փոյթ .
Այդ ցաւ՝ զոր լայ , սաուխթ ցաւոյդ ,
Քո մայրենի հոգողութեամբ
Է անհընար բաւնիլ յորդւոյդ ։

Ոչ այնչափ լայ քանզի փնասէն
Ծըղօտք և յարդք խայթոցաղէն ,
Եւ զի յաւէտ քան թէ ծըղօտք ,
Խիստ ձըմերունք ըզնա նեղեն .

( Թէպէտ և լայ քանզի փնասէն
Ծըղօտք և յարդք խայթոցաղէն ,
Եւ զի յաւէտ քան թէ ծըղօտք ,
Խիստ ձըմերունք ըզնա նեղեն . )

Որչափ զի խոչ է սիրողին
Պահ անագան ժամանակին .
Եւ տեսանէ այսչափ յիւրմէ
Գող բացական զօրըն վերջին ։

Եթէ օրէն այժմէն ձաղկիլ ,
Այժմէն խոցիւք վիրաւորիլ ,
Այժմէն ցանկայ բարձր 'ի գերան
Զիւրըն բազկին տալ բևեռիլ ։

"Այն իսկ խաչին յապաղութիւն ,
Ծանր տանջանք քան խաչ ողջոյն .
Ըզսա մանուկն ունի պատճառ ,
Յոր սակըս լայ պատճառ է սոյն ։

Աճեաց 'ի տիս , նոյնպէս աճեաց
Ոյժ եւ բորբոք չարչարանաց .
Որովարդէն 'ի հօր հիւսան
Ձեռն արկանէ դըժուար գործած ։

Բամբէ · յորժամ միայնակ էր
Եւ զհիւսնական գործիս դիտէր ,
Բանիցս անգամ այսպէս բարբառ
Խանդաղակաթ նա արձակէր ․

„ Ահա հեղոյք ահա կըռան ,
Փայտք խոտորնակք եւ բուն գերան .
Կամակատար բազուկ պարզեմք ,
Ո՞ւր ես դահիճ իմ խաչահան ։ ”

Այսպէս ասէ , եւ առ նըմին
Ըզմերկ բազուկ զիրան մարմնին
Ձըգտէ 'ի բուն խանդաղակաթ ,
Եւ պատրաստէ առ խոց վիրին ։

Կայր ինչ բըլուր՝ որոյ կատար
Խիտ ձիթենեօք հովանանայր ,
Ոչ ինչ հեռի , ո՛վ դու Սաղիմ ,
'Ի պարըսպաց քոց բարձրածայր ։

Ուր էր սովոր յաճախակի
Հեղուլ զմարմին իւր 'ի գետնի .
Ուր ըզգիշեր առհասարակ
Յաղօթս հանէր արտասուալի ։

Համբոյրըս բիւր մատուցանէր
Այնըմ հողոյ յոր ընկղըմնէր .
Ոչ առաջին կայլակ արեան
Ուղր յերակաց հոսելոց էր ։

Յաղօթըս իւր ասաց յոլով,
„ Ո՞րբ ներկեցից արեամբ իմով
Զքեզ ըզհողդ որ արդ թացեալ
Ոռոգանիս լալեօք իմով ։ ”

Բազում անգամ և ողջոյն տայ
Որբ պահ ընդ պահ 'ի քաղաք գայ ,
Յարկաց և տանց հանդերձելոց
Լինել իւրոց ցաւոց վըկայ ։

Ալանէ նա երբեմն 'ի յայց
Ճանապարհին արեամբ ներկած ,
Յոր ըզկըճնի բազում անգամ
Խոնջ ընդ խաչիւ երթևեկեաց ։

Ու այն ինչ նա ըզլեառն ետես
Ըզպարտութեան մահուն կըրկէս ,
Յորում եդ Մեր փըշտաց և իւր
Կէտ աւարտման վերջին հանդէս ։

Ո՞նչ էր յայնժամ քեզ տեսանել,
Զաչըս զերես բոցափայլել,
Եւ ապաժոյժ ըզսիրտ նորա
Զխուրդ բոցոյն ըզվառ ճըճել:

Մատչին սոքա յանուրջս անդամ,
Զբաղէն ըզքուն գիշերական.
Զարչարանաց շարք գըլխովին
Կարգ ըստ կարգի գան յանդիման:

Նոյն և յայնժամ ըստէպ նըմին
Թուէր ըզգաստ պարզել տուէին,
Զոգն 'ի մըտրակ ըզգլուխ 'ի փուշ,
Ըզպարանոց 'ի յեց խաչին:

Եւ կարկառէ զիւրըն գաստակ
Ունել ըզփայտ սին անգոյակ.
Որպէս եթէ կայր առաջի
Ընդ ժանտ ամբոխ խաչ գըժընդակ:

Տենա երբեմն և երևի,
Որպէս եթէ 'ի վայր հակի
Գըլուխ նորա ոգեսպառեալ
Երբ պարանոց լուծեալ թօշնի:

Տեղի տայ քուն առ 'ի նմանէ,
Նոյն ուշ պատկեր զապագայէ.
Զայս որոճայ 'ի խորհրդեան,
Զայս անսպակաս յարաձըգէ:

Յառնէ 'ի վեր և կաթոգին
Յոգւոց հանէ խորոց սրտին ·
„Զոր ինչ, ասէ, ունիմ կրել,
Այժմէն պատրաստ եմ առ նոսին ։

Խաղաս Սէր դու · վեհիս յաղթես ,
Եւ դաւանել զիս ըստիպես ,
Ըզտէրութիւն մեր աստուածեան
Գոլ քան ըզքոյն փոքըր գոգցես ։

Կարող եմ ես հողմոց սաստել
Որք 'ի ծովուն գան ոգորել ·
Եւ ըզվահրոտ ըզհարաւոյն
Ըզհառաչիւն ըմբերանել ։

Յորժամ հաճոյ ինձ թուեցան ,
'Ի լոյս կենաց շաղիղք դարձան ·
Եւ մահ և կեանք ծառայապէս
Իմում անսան ակնարկութեան ։

Կարող եմ ես 'ի յօտարաց
Զամենայն ցաւ առնել 'ի բաց ·
Այլ զիմ բառնալ եմ անկարող ,
Որ ինձ եղեալ խափան ձեռաց ։

Ոչ անարժան ես համարիմ ,
Պարտեալ 'ի քէն՝ տեղ տալ ինքնին ,
Եւ զիմ բազուկ կալանաւոր ,
Տալ մըտադիւր տռւանց քոյին ։

Ուր ինձ յաղթողդ է՞ր յապաղես ,
Ըղխոց վիրաց հի՞մ ոչ անձես .
Զի՞ տակաւին ինձ զանուշակ
Ընուրն խայլին ոչ ըստանձնես ։

Սայե՞լ արդեօք և կամ վաւե՞ր ,
Որեղ ըղքոյին յամել պատուէր .
Զի՞ զոր կըրել հրամայես դու ,
Խափան լինիս առնուլ ըզվէր ։

Կա՛մ չէր արժան զիս ըստիպել ,
Կա՛մ զյօժարեալն 'ի հնազանդել
Թողուլ կամաց և տէրութեանդ ,
Ըզհետ երթալ և կատարել ։

Զի ինձ աւուրց անսալ մընայ ,
Եւ զի կարգեալ ժամ մերձենայ .
Ո՜ն 'ի բա՛ց տար ըզյամրութիւն ,
Սէր անդանդաղ ըզնոյն ատեայ ։

Որքէ , ընդէ՞ր հանդարտընթաց
Իմ այսպիսի հասակ կենաց .
Որքէ , ընդէ՞ր ոչ ժամանէ
Որան զամըս իւր կանխեալ յընթաց ։

Ընկա՛րծ թէ հայր՝ ամաց թողոյր
Գընալ ըշտապ արշաւասոյր ,
Եւ փութաքայլ ժամուց տունջեան
Թևակոխել քան զոր սովոր ։

Երթայք աւուրք երթայք և ժամք ,
Ճե՛պ տուք թըռչել դուք անտարտամք ․
Եւ զանախորժ դանդաղութիւն
Ինձ զըլեցէք 'ի բայց տարայք ։

Ո՛վ թէ քանի՛ ախորժական
Լիցի՛ քո եկ թէ և դաժան ․
Ո՞րք եկեսցես , ժամըդ վերջին ,
Իմոց կենաց կէտ աւարտման ։

Թէպէտ այնչափ ցաւս երկնեսցես
Որչափ վայրկեան 'ի քեզ փակես ,
Բայց կամէի յայսըմ ժամու
Յորում խօսիմ՝ զի եկեսցես ։

Ո՛հ ․ փութասջիր , և ընդ քեզ ած
Զամենայն ազգ չարչարանաց ․
Չարչարանաց ինձ դիւր միայն
Եղիցի կիրք չարչարանաց ։

Զի փութասցիս և ընթասցիս
Սաղ քան զընթաց որով բերիս ,
Վամն անադան , էկ և կանխեա
Քան ըղձափաք տարփացողիս ։

# ԵՂԵՐԵՐԳՈՒԹԻՒՆ

## ԵՐՐՈՐԴ

---

ԱՊԱԳԱՅ ՉԱՐՉԱՐԱՆՔ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՂԵՆ ՆՄԱ

ՄԻՇՏ ԱՌԱՋԻԿԱՅ ՑԱՒՈՑՆ ՊԱՏՃԱՌՔ

Փրկիչդ Յիսուս, զի՞ գանգատիս
Ընդ դանդաղկոտ ամս և ընդ տիս .
Զի՞ գանգատես թէ յամրաքայլք
Նմիք աւուրք՝ զոր ոչ կամիս :

Եւ որպէս թէ արդ ոչ կըրես
Ըզկատաղանս՝ այնպէս հեծես ,
Որովք յապայս անգութ Սաղիմ
Վանտասցի քեզ գազանապէս :

Դ՝ քոյ լըռեալ գանգատանաց .
Քեզ վիշտք եղեն չարչարանաց
Որ ինչ մասունք կենաց անցին ,
Յորմէ հետէ քեզ այն ծագեաց .

Լըցցի՛ լոյլ քո այդ պապակ
Որով տապիս իբր 'ի խորշակ ·
'Ի մէջ գետոյ առատահոս
Ընդէ՞ր ջըրոյ լմնիս խընդրակ ։

Թէ չիք յանձնէդ Թողուլ համբուն
Բայց Թէ մահուամբ ըզտենչ մահուն ,
Երկար ուրեմն այդ յապաղանք
Է՞ քոյ ըղձից աջողագոյն ։

Այդ յապաղանք քեզ տանջանք է ,
Դա 'ի մահուանս ըզմահ բարդէ ·
Դա արդ առնէ զոր ինձ յապայս
Ամբոխ դըժնեայ քեզ արասցէ ։

Թո՛յլ ինձ արա և զայս ասել ·
Այդ ոչ բընաւ է յապաղել ·
Ո՞չ կանխէ դա քան ըզդահճաց
Աջ կատաղի՝ այդպէս տանջել ։

Թէ չև կըրես տուրըն զուլամբ
Եւ ըզշըղթայս ըզքո ձեռամբ ,
Եւ ոչ պըսակ տատասկահիւս
Պատառոտիչ 'ի սուրբ կառափ ,

Թէ չև հանդերձք պատմուճանին ,
Առ 'ի մարմնոյդ տեռաղերծին ,
Եւ ոչ արեան քո ճապաղեօք
Ըսսորանայ ըսփիւռ գետին ,

Թէ ոչ հընչէն լոյսք դըժընդակք
Ընդ ձայնն զոր տան կարկամ մըտրակք ,
Եւ թէ ոչ խաչ ամբառնալի
Ըզքեզ ունի կախ վերելեալ ,

Բայց քեզ ածեն զայս ամենայն
Միտք ոչ անգէտ զանցս ապագայն ,
Եւ զոյգ նըմին Սէր կաթոգին
Պատճառք այսչափ վըշտակրութեան ։

Նա տեսանէ յոր ինչ լըրբէ
Կատաղութիւն և ոխ սըրտի ·
Զոր տեսանէն՝ 'ի սիրտ կըրէր ,
Եւ ոչ ինչ ցաւ հեռի առնի ։

Այժմէն 'ի սա դըժնէանայ ,
Թէպէտ յանդամն ոչ վէր բանայ
Անգութ դահճաց գազանութիւն ,
Եւ կարեվէր խոցիւք խաղայ ։

Աստ մատնութիւն՝ բանք սուտ երդմանց
Ինքնանըզօղ քոց ընտանեաց ·
Հաւատ նոցին թեթևագոյն
Քան ըզխըռուիւ զօս անտառաց ։

Աստ են տառունք բաղմակուղեան ,
Կարք երկաթիք շըղընչաձայն ,
Եւ տեղ հարեալ յիւրում տեղւոջ ,
Յորում հարցի 'ի յապագայն ։

Ուստ միշտ ունիս դահճաց վոհմակ ,
Ուստ ըղհեղոյս՝ խաչ դժընդակ .
Նոյն և ըղվէր բարդեալ վիրօք
Որ զքեզ յօշէն առ հասարակ .

Ուստ առընթեր կայ նա և Մայր ,
Հայի 'ի խաչ՝ դէմք դալկահար .
Նա որչափ վէրս 'ի քեզ դիտէ ,
Նոյնչափ յինքեան Սէրըն եհար .

Ուստէն ընդ քեզ միահաղոյն
Ըրմլեալ 'ի սուգ յաղէտ անհուն ,
Կըրէ մահունս բիւրապատիկ ,
Նախ քան ըզմահ՝ և դառնագոյն .

Օ՜ ի՛նչ ծանրագոյն զի՛նչ դու կրեցես
Նորա առ 'ի մահ 'ի կախ կացցես .
Օ՜ ի՛նչ ծանրագոյն քան զայդոսիկ
Նորա մահ 'ի փայտ ճաշակեցես .

Րա՛բէ , քանի՛ թեթևագին
Փուշ և խըրթանք քեզ եղիցին .
Նա խաչ և ցաւ՝ խոցուածք վիրաց ,
Օ՛ որ սուր երկաթք տացեն մարմնին ,

Նա ոչ 'ի քէն մեկուսանայ ,
Ա՛յլ անփախուստ նըպատակ կայ ,
Միշտ ակներև այսչափ ցաւոց
Նշերական պատկեր դըժնեայ .

Տօղօրէ սա եթէ փութաս
Վարդապետել 'ի յարտօրայս.
Տօղօրէ սա թէ յամայիս,
Խօսէ 'ի սենեակ առանձնանաս ։

Որ օրինակ շուտ եղջերու
Ծաղցը 'ի մայրիս Լիբանանու,
Որ ջըր անըղգզըշ ըղըընակուշտ
Հար 'ի բացուստ նետ մահացու,

Խօսէ ընդ մարմանդ թէ ընդ ձորակ
Վազըս առնու 'ի կուշտ սըլաք,
Խօսէ փախըստեայ զիւրըն մեղմէ
Պասուք աղեաց 'ի ջինջ վըտակ,

'Ի զուր խընդրէ անձին սատար,
Մըխեալ է խոր նետ մահարար
Յիւր ըղձնակուշտ արիւնաթոր.
Մահն է միայն ցաւոց կատար ։

Սապէս և դու կենդանի ես,
Մահ դառնութեան անդուլ կըրես.
Նա ամենայն քոց աղետից
Մահըն միակ վերջ տայ նոյնպէս ։

Յայսըմ պահու խաչն է միայն
Տընկեալ 'ի սիրտդ և խիղճք տարփման.
Նա զայս կոչես տիւ և գիշեր,
Որպէս եթէ դըր բացական ։

Տանջէն ըզքեզ անուրջք 'ի քուն,
Ըստոյգ վըշտաց յար և հանգոյն,
Խոչ մի գիշեր քեզ դիւրատար,
Նա քան ըզտիւ դաժանագոյն ։

Առ ինչ ապա քեզ երևին
Այսչափ վըշտաց ըստանձնողին,
Թէ ժամանակք քոց տանջանաց
Հանգարտաքայլ առ քեզ բերին ։

Իղձ սիրողիդ է նոր հանդէս,
Որ ինչ մօտ է՝ զայն Թախանձես .
Եւ առ 'ի կրել՝ հընար ցանկաս,
Զոր ինչ ըղձէր արդէն կըրես ։

Անգիտանամ զինչ խորհեցայց .
Իղձք քո ներհակք քոց ըղձանաց .
Մի՞ արդեօք Սէր նա և ըզքեզ,
Անձին առնէ ուշամոռաց ։

Զոր ինչ ժըտես՝ այն ընդ քեզ է .
Ոչ ըզսիրողդ՝ խաչ լըքանէ .
Եւ ոչ յառաջ քան զօր վերջին
Մահաբերն այն ըզքեզ լըքցէ ։

# ԵՂԵՐԵՐԳՈՒԹԻՒՆ

## ՉՈՐՐՈՐԴ

'Ի ՔՐԻՍՏՈՍ ՍԱՍՏԿԱԳՈՅՆ ԵՂԵՆ
ԵՒ ՑԱՐԱՏԵՒ ՄՏԱՑ ՎՇՏԱԿՐՈՒԹԻՒՆՔ ՔԱՆ
ԶՄԱՐՄՆՈՑ

Քարէ. յանդէպ տըգէտ ռամիկ
Ոչ ինչ կարծէ լինել սաստիկ
Քան ըղձուսեր և քան ըղձհուր
Քան զաջ դաշնջին ըռնամարտիկ .

Մեծագոյն մասն է տանջանաց
Զոր նախ կըրեն միտք իրազգաց ,
Ու մատուցեալ տակաւ մարմնոյն
Ըզգայապես 'ի փորձ իրաց .

Երբ 'ի յերկաթ երբ 'ի կըրակ ,
Եւ երբ հեռուստ հայլ դէտակ
Յամէն գործիս դաժան մահուն
Դաժանութեան յաղգ յաղգ տեսակ .

Երբ յայնպիսեաց ոչ ինչ ծածկի
Եւ 'ի տըխուր պատկեր յաւի ,
Նա 'ի յանձին կըրէ արդէն
Որչափ ինչ ցաւ տանջանքն ունի ։

Դառն է մըտաց ըղձայութիւն
Քան նիւթական մերըս մարմնոյն .
Սա երբ ըղձայ , և նըւաղի .
Նորայն մընայ միշտ հաստատուն ։

Օ՜հ ինչ ցաւ ըղձաց որ գըլորեցաւ
Յանկարծաձիգ հարեալ փըքնաւ ,
Եւ օրհասին տարաժամու
Յառաջագոյն անդիտացաւ ։

Օ՜հ ինչ ցաւ ըղձաց զոր յանդորրու
Եւ յօրացեալ 'ի քուն քաղցու ,
'Ի փետրալից առագաստէն
Մահըն խըլեաց յանկարծ պահու ։

Ա՛հ դուք բըլուրք Գեթսեմանեայ ,
Դու գահաւանդ ծիլ Գողգոթայ ,
Դու հող գետնոյդ՝ որ արբեցիս
Աստուածական արեամբ նորա ,

Պալատք Պետաց քահանայից
Եւ մեծ Պրետորք Լատին գընդից ,
Եւ դու երկին՝ որ ունիս տալ
Քոյդ մորմոքման ցոյց կարեկից ,

Եւ համազգ ընտելութիւն իւրոց
Որ իրաւամբք լիցիս ցաւած ,
Ռամբէ , ո՛րքան մաման 'ի ցաւոց
Ծանօթացի ձեզ յամբաւաց ։

Ով ծովք ունին ալիս այնչափ ,
Եւ ոչ ափունք աւազ այնչափ ,
Եւ ոչ 'ի գալ գարնան նորոյ
Հողըն տամուկ՝ ըղձեզ այնչափ ,

Որչափ ըղձքն Հօր Միածին
Յաւէք յամենուստ խուժեալ պատին ·
Դու միայնակ զորըս կըրես ,
Դու համարոյ գիտակ նոցին ։

Յամենատես աչացըդ քոյ
Ով թաքչի կէտ հանդերձելոց ·
Ռամբէ · սարսափ նախաժամման
Ռանի տագնապ ունի ցաւոց ։

Այսպէս ըղձքեզ ձըգձըգեցեն ,
Այսպէս հարցեն և պըրկեցեն ·
Այսպէս սոքա այնպէս նոքա
Վէրըս այսչափ ըղձքն գիցեն ։

Այսպէս հարցեն 'ի գագաթան ;
Տատանակ այսչափ և խոր այսքան ·
Այս եղիցին բանք իշխանաց ,
Այս ամբոխին մոլեգնական ·

Այսպէս ըստուար սայրք հեղուսաց
Հերձցեն ըղթաթ զոտից ձեռաց ,
Այսպէս նիզակ մըխեալ'ի կող
Ընդ սիրտըն շեշտ անցցէ թափանց :

Արդ այսպիսեօք ւայլովք բազմօք
Մխոք սիրողիդ կոծին հոգւօք ,
Որպէս պարեխ զոր երրադարձ
Նուլըն ծեծէ անդուլ ալեօք :

Զըմեռնաշունչ բարկ մըրըրկին
Պնայ յաջորդէ սիւգ քաղցրագին
Այլ դառնագոյն քոց մըրըրկաց
Ոչ երևի սիւգ ինչ հեշտին :

Եւ նոյն իսկ օր և ժամանակ ,
Որոց ցաւոց ոչ է ճարակ .
Նոյն ինքըն յոյս և ցաւ համբուն
Խնեթև գործէ զհոգ դըժընդակ :

Բայց քեզ ոչ ինչ վիշտըս բառնայ
Այս ժամանակ սուր փախըստեայ .
Եւ ոչ քեզ յոյս դիւրահաւան
Մատուցանէ շահ դուզնաքեայ :

Եւ ոչ իսկ քո այդ ցաւ սըրտի
Յանձն իւր մաշեալ և ըսպառի .
Եւ ոչ երբեք լալեօք իւրովք
Յագուրդ առնու 'ի դուրս թափի :

Սուգ և թախիծ մեր սրտահար
Ո՛ւր գըտանէ իւր մխիթար ․
Իսկ քոյ վըշտաց և աղետից ,
Մա՛հըն միայն դեղ և հընար ․

Թէպէտ և միտք զօրաւոր է
Ըզհոգ տըխուր քեցել յանձնէ ,
Բայց մըտադիւր ՚ի վիշտըս իւր ,
Ընձամբ անձին զինքըն պահէ ․

Իսկ որ կարէն նա իւրովն
Զանձըն սփոփել , բառնայ անտի ․
Իսկ ոչ կիւրմէ տըրտմութենէ
Կըրէպ լինել նա յօժարի ․

Ո՜վ հեշտ հանգիստ գիւղէ նըմին ,
Ո՜վ քաղցըր տիպ ապագային ,
Ո՜վ եկաւոր գիշերոյն մութ ,
Ո՜վ դարձաւոր լոյս ցերեկին ,

Ո՜վ մայրենի գորով սիրոյն ,
Ո՜վ ընտանեաց իւր տեսութիւն ․
Ո՜վ հայրենեան վերին եթեր ,
Ո՜վ Հայր անգամ իւր համագոյն ․

Միածինդ Հօր , զինչ տասցիս ,
Կամ զո՞ր պատճառ յառաջ բերցիս ,
Որով այսչափ տանել յերկար
Կամիս զայսչափ ցաւս աղետից ․

Օ՜ինչ այլ պատճառք, բայց փրկեսցես
Ըզթըշնամիդ զըզուիչ այսպէս·
Եւ զի զըզուեալ առ 'ի նմանէ
Հաշտարարի ըդդէմն առցես ։

Եւ ո՜վ բընաւ ոչ յաղթեսցի
Տեղի տուեալ սիրոյդ մեծի,
Եւ ժուժեսցէ անխիշատակ
Լինել ցաւոյդ անճառելի ։

Ժուժէ սակայն և անտեսէ,
Ը՛յլուր ըզսին խորհուրդ շըրջէ,
Ը՛նհօգացեալ զի՛նչ խանդ սիրոյդ
Եւ զի՛նչ այս վէրք նըշանակէ ։

Ոչէք նըմին են բերկրական,
Ս՜արի խուճապ յոր ձըգէն զայն
Կոյր ցանկութիւն նոյն և զայրոյթ,
Եւ սեգութիւն՝ սէր նանրութեան ։

Ո՜վ աղետից· սիրտ մարդկեղէն
Զիք չիք 'ի քեզ՝ չիք ապաքէն.
Եւ ոչ քո մայր որ ետ ըզշունչ,
Նա 'ի մերմէ էր արենէն ։

Ս՜իրտ երկաթի, թէ ոչ ադդին
'Ի քեզ տատասկք ւոչ վէրք նորին,
Ընդ որ և ժայռք և առապարք
Կարեկցեցան որպէս պատմին ։

Սիրտ երկաթի, թէ ուղխք արեանց
Ընդ ոչ ձգնչէն չիթ մի յաչաց.
Նա ոչ իւր սէր խանդաղագին
Ի ձապաղիս արեան առուաց։

Այս է ահա՝ որ տօչորէր
Զան ըղձայլոտ ըղսխրող մեր.
Այս է ահա՝ որ դառնագոյն
Զան ըղըևեռ քան ըղխաչն էր։

Խըշուառացեալք կըշռեմք ըղցաւ
Ի մրտրակաց և տատասկաւ.
Բայց ոչ մըտրակք և ոչ տատասկք
Ոչին նըման ծայրագոյն ցաւ։

Յաւք ծայրագոյնք էին նըման
Ինքնակործան ազգըն դըժնեայ.
Նա այսպխսում սիրոյ պըտուղ,
Նա ոչ մի սէր՝ նըմին ընծայ։

# ԵՂԵՐԵՐԳՈՒԹԻՒՆ

## ՀԻՆԳԵՐՈՐԴ

---

### ՍԷՐՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ 'Ի ՏԱՆՋԱՆՍ ԱՆԴ

### ԱՆՑԱԳ

Եւ արդ ահա քեզ անադան
Եկն եհաս , Բանդ աստուածական ,
Տիւ բաղմաբաղձ վերջին և տիւ
Սիրոյդ վըկայ անճառական ։

Բղխոց վիրաց զոր դու ցայս վայր
Մըտօք միայն 'ի քեզ տարար ,
Բ.րդ 'ի բոլոր խոկ 'ի մարմնի
Տանիս 'ի խոր դառնաչարչար ։

Կըրես այժմիկ որ ինչ որչափ
Սովոր էիր ցանկալ անձամբ ,
Եւ ոչ մասն ինչ քոյոց ըղձից
Եւ'ի դերև , եհաս յիւր չափ ։

Գոնեայ այժմուս ըղձոյդ գորով
Ի ծայր լըրմանն եհաս լիով.
Չունի կարծեմ մեծ ես հանդէս
Զիւր տալ զփորձ՝ լընուլ զիւր սով:

Քըրտնեցար յորդ զարեան կայլակ,
Եւ արիւնոտ հոսեաց առուակ.
Երեսք և ծոցք և պարեգօտ
Եւ հող թանայր կարմիր գունակ:

Դահիճք կարկամ տոռունս արկեալ
Պարանոցիդ աստուածարեալ,
Ընդ ժայռ խոժոռ ընդ խիստ շաւիղ
Ձըրգձըրգեցին ընդ քարշ բերեալ:

Զերծեալ 'ի քէն քոյդ պատմուճան
Ձաղկեցար դու այնչափ ըզգան,
Որչափ զանեն յորձանք ալեօք
Ըզծովափունս տիւրոսական:

Գուցէ և ոյժ առ 'ի հարուած,
Դու յաւելեր խոնջեալ բազկաց.
Զի քո տանջանք լցին հանդէտ
Վանտաժըրտից փափաքանաց:

Զինչ անդամոց քոյին պատկեր.
Առհասարակ մի միայն վէր.
Բաց են գոգցես ոսկերատիդ
Ի մըտրակաց դըժոխըմբէր:

Փուշք մանկօք բըռնի հարեալ
Գըրնան Թափանց յուղեղդ օրհնեալ։
Զըսկաւառակ ողջոյն գըլխոյդ
Բազմահարուած պատառոտեալ։

Ո՞ւր փախեաւ գոյն, ո՞ւր տիպ դիմաց,
Ո՞ւր ճակատուդ այն գեղ շնորհաց,
Ո՞ւր և փաղփուն ականողիք
Վ՝ան ըզկաճառ քոյ աստեղաց։

Ըստ կերպարան գեղադիտակ
Բազում գանիւք արդ կապուտակ։
Սորեալ են աչք աստղանըշոյլ
Յարեան պալար 'ի կարմրորակ։

Ըրեամբ մածեալ գէսք գագաթան
Զայտիւք դիմօք առկախեալ կան։
Ջունի նըշմար տեսիլ բոլոր
Ըզկանխատիպ չըքնաղ տեսլեան։

Զի՞ է յիշել զանթիւ նախատ,
Ըզհայհոյիչ բան ապիրատ,
Ըզժանտաժուտ արձակ լեզուս
'Ի վարըս քոյ յախտից ազատ։

Նա՛ և 'ի լեառն ափափայից
Ըրեամբ ծըրդեալ մահապարտից,
Յայսչափ պատժոց 'ի նըպատակ,
Հարկ էր բերիլ խոնջեալ ոտից։

Աստ 'ի կատար ըղխաչ դըժնեայ,
Ազգ դըժնագոյն և անոպայ
Բըռնադատեաց, թէ և ցետեալ,
Հանել 'ի վեր յուսոյդ վերայ ։

Ո՜վ թէ քանի 'ի խոր մըխեաց
Ի քո սընար զայր տատասկաց
Բեռն այսպիսի դըժոխակիր,
Յորժամ ցընցէր զանրակ ուղանց ։

Քանիցս անգամ, աղէք գելուն,
Ընդ գերանաւ տեսար նըկուն,
Եւ ըզգետնի ընդհարկանել
Անտիպ դիմօք պատառատուն ։

Քանիցս անգամ, սիրտք գելանին,
Զողն անկելոյդ խըրթանեցին,
Ըզքո մնակուշտ նոյն և ըզգլուխ
Լի խայթոցիւք ժանտ դըժնըկին ։

Դեռ անըսպի էին ներքանք,
Եւ ոչ ձեղքեալք գանք և հարանք ․
Փոխան կարձաց խարազանից
Եղեն պարեխք և սուր արձանք ։

Երբ վարոցօք դու խըրթանիս,
Յայսկոյս յայնկոյս երբ ձըգձըգիս,
Եւ ընդ դըժուարս առապարաց
Երբ ընթանալ բըռնաբարիս,

Զերկաքանչիւր քո դարշապար
Հերձոտեցին վէմք սըրածայր,
Զի մի մասն ինչ 'ի սուրբ մարմնոյդ
Լինէր անվէր անխայծ մընայր։

Ի վախճանի վերելակեալ
Ի Կառափման սար սեպացեալ,
Գոգցես 'ի սպառ տեղի ետուն
Նա կեանք և շունչ յանձըն վըտտեալ։

Զարչարիս դու զայս ամենայն,
Դեռ չարչարիւ խղճք ոչ լըցան.
Նա ուր արդեօք 'ի վախճանի
Սէրըն առցէ կէտ դադարման։

Դամ մի հայեաց թէ զո՞ փրըրկես,
Ընծեամ ըղձին զոր ընծեռես,
Զեմք հողածինքս այսչափ արդոյ
Նա ոչ բոլոր երկրիս երես։

Խնէ վըճարել ախորժեցեր
Զգին վաճառոյդ քան զոր արժէր,
Շատ էր արդեօք և աւելի,
Շիթ մի արեան զոր թափեցեր։

Որդ ամենայնք կապուտակին,
Որդ վէր արիւն հանուր մասին.
Րամբէ, անչափ և անխընայ
Ծախ վատնեցեր ըղքո անձին։

Գոնեայ եթէ առ սէրդ անհատ,
Մատչէր շնորհ թէ և անքատ,
Ոչ գըլխովին արդարացի
Գերաշխարան ողբ և գանգատ։

Բայց ո՞ւմ արդեօք քո սուրբ արիւն,
Ո՞ւմ փոյթ իցեն խորխայթք մարմնոյն,
Եւ երանի՜ թէ այս լինէր
Գըրուխ աւարտ մեր ամօթոյն։

Բազում անգամ այսչափ բարեաց
Են փոխադարձք նախատանաց,
Ո՛վ աղետից, հունձք անիրաւք
Մըշակողին տըւեալք քըրտանց։

Սակայն ըզքեզ սէրըն կիզու,
Պատրաստ 'ի տօկ քան զայդ ծանու,
„Ամբիծք, ասես, չարչարանօք,
Այլ սուղ սիրոյս յագուրդ չառնու։

Պատիժք զոր սէր ըզնև ածէ,
Իմ միայնակ ըսփոփանք է.
Այս ուղխք գետոց ըղձեր ծարաւ
Պատկանապէս շիջուցանէ։

Անգըթութիւն խըժդըժական
Յիս թափեսցէ պըյժ ամենայն.
Յամբաւութիւն վիրաց իմոց
Այլ յաւելցէ, տարայց համայն։

Դեռ չեն քամեալք ոսին երակք
Յիմոց արեանց առ Հասարակ.
Ընդշխարեալ մասըն տակաւ
Թող ճըմլեսցէ այս իմ մաղթանք.

Թող մատուսցէ, զոր և առնէ,
Մեր պաշտօնեայս սիրոյն դըժնէ.
Փոխան այսմիկ 'ի վարձ երկանց
Զաղօթըս մեր նա լըւիցէ:

Թողեալ մարմնոյս վէրք սըրբեսցեն
Ըզյանցաւորս որք զայն դընեն,
Եւ մերըս մահ 'ի քաւութիւն
Լիցի մեղաց որոց գործեն:"

Այսպէս մեղմէ սիրտըն գըթած
Զոր յանցանեմք առ նա յանցուած,
Եւ նոյն իսկ սէր խըրախոյս առնու
Առ 'ի մերոց եղեռնութեանց:

Ըզցաւատեալ զանդամ մարմնոյն
Ըզհարուածեալ զիրան նորուն
Թողուն, այո, նեարդք ջըլատեալք,
Եւ կարթք կըթոտք զոտըս թողուն.

Ալ ոչ թողուն ոգիք սըրտին
Ինքնամատոյց դիմագրաւին
Ժուժել տանել չարակրութեանց
Քան զոր կըրեաց նա սաստկագին.

Որպէս հըրատ բարձրակուտակ
Նորոյք լուցկեօք առնու ճարակ ,
Եւ 'ի տարերց և ոչ մի նիւթ
Յաղթել նորմին է ընդունակ ,

Այպէս նա զիւր հըրդեհ տածէ ,
Եւ նոր ցաւովք բազմապատկէ ,
Եւ որ զհամայն կըրէ յանձին ,
Ոչ ինչ հերիք անձին կարծէ ։

Յանկայ տանել բազմագունից
Քան զառաջին ծանրագունից ,
Եւ վաղահաս իւր խընդրելոյն
Լինին նորա անձուկք տենչից ։

Խըժդըժութիւն և Սէր անվան
Հանդէտ ուժով դըժնէանան .
Եւ զոխերիմ զիւրեանց բազուկ ,
Ի մարտ զինեն բազմարկածեան ։

Գոգցես միմեանց դաշնաւորեալ ,
Ընդխտանեան 'ի յագենալ ,
Եւ մոլեգին խըժդըժութիւն ,
Եւ Սէր կաթոտ յարիւն խառնեալ ։

# ՍՊԱՐԱՐԴՈՒԹԻՒՆ

## ՎԵՑԵՐՈՐԴ

---

'Ի ՔՐԻՍՏՈՍ ՄԵՐԿԱՑԵԱԼ ՅԵՏԻՆ

ԱՆԱՐԳԱՆՕՔ

Զի՞նչ այլ կամիս, Սէրըդ դաժան,
Եւ երբ արդեօք հուսկ անադան
Վախճան դիցես վիրաց յոգունց
Դիցես վախճան եւ դըժնութեան .

Ահա կըրկին բանան երակք ,
Որքէն անդամք բոսոր վիժակ .
Ահա յարիւն եւ յապաժոյժ
Կըրկին կարմրին դեռնոյն յատակք .

'Ի բաց կորզի ձորձ 'ի մարմնոյն ,
Վէրք մակարդեալք կից են ձորձոյն .
Եւ ընդ քարշիլ բըռնի 'ի բաց
Քարշէ առնու ըզխայծ մորթոյն .

Ընխայեաջիք , դաշնիձք , դիմել
Ըզտառապեալ մարմին քըշտել ·
Ոչ ինչ ունի ձեզ մասըն տալ
Բայց ըղցետեալ առ 'ի ցետել :

Սոսկան վիրաց կըցեալ ըսպիք
Եւ 'ի ձեռաց մեղկ և փափկիկ ,
Օ՜ի հապճեպով ձեռըն մըխեալ
Պատառոտէք դուք զայդոսիկ :

Ընդ օդ խօսիմք · նոքա զօրէն
Գարնանազայր ուղխից սորէն ,
Որք զամենայն ընդդիմակաց
Յանկարծ աւեօք տապալ ձըգեն :

Յամէն կողմանց արիւն ցայտէ
Եւ յանդամոց 'ի դուրս վիժէ ·
Որպէս զխարդ է ձեռընհաս ,
Ըզմերկ մարմնով քօղ արկանէ :

Ոչ աննըման էր կերպարան
Իւր անդամոց ներկեալ յարեան ,
Երբ զինուորաց կատաղութիւն
Խարազանօք խըզըրատեաց զայն :

Օ՜ի՞նչ ինչ կարաց արժանաւոր
Ընկղխտանալ պատժոցըդ նոր ,
Ա՛յն որ ոչ ինչ վընասապարտ ,
Ամ՛ վըկայեաց և դատաւոր :

Ահա զոփայ առ 'ի ցըրտոյ
Մերկեալ բըռնի յարկանելոյ ·
Եւ քան ըզմիշտ պատուհասիս
Ցաւ են նըմա կիրք ամօթոյ ։

Ո՛վ դու Արփիդ , զոր 'ի վերջէ՝
Այժմէն առջիր ըզշող յերկրէ ·
Ըզքո հաստիչ նոյն և ըզքեզ
Նոյն և ըզտիւ քօղով ծածկէ ։

Գիտեմ առնես · այլ զոր կամիս
Պարածածկել 'ի խաւարիս ,
Ա՜հ , քօղարկիլ ոչ կամի նա
Պաշտամամբ քոյին յոր յօժարիս ։

Ոչ թէ մեղմել իւր պատուհաս ,
Աճել ցանկայ նա անպակաս ·
Յարգելուլ քո ըզճառագայթ ,
Մեծ ինչ մասն այնց լինէր պակաս ։

Ո՛վ դուք դաշինք , որ այն զըրգլեալ
Թէպէտ կեղտոտ գըծծատեալ ,
Որով յառաջ երեսք նորին
Քօղարկեցան առ 'ի կատակ ։

Աղտեղագոյն այն ցընցոտիք
Գէթ ծածկէին մասամբ իւիք
Ըզծըւատեալ մարմին նորա ,
Եւ զժանտութեան ըզձեր կընիք ։

Զխարդ և է արկանելեօք
Յանձկել հայցեմ զհուր անդամօք .
Ի մեծ պարգև համարեսցի
Անարդ գըծուծ այն տառատոկ ։

Մի՛ անխայէք սիրտք կարծրագոյն
Զայն ձորձ խոշոր մերկ ցետելոյն .
Այլ հողմք առնուն զիմ բան նանիր ,
Զայն անխայեն անագորոյն ։

Այսպէս ուրեմն այն որ զգեցոյց
Մայրեաց տերև՝ կեղև ծառոյ ,
Որ ըզգեցոյց դաշտաց ըզսեզ
Զունի ըզգեստ իւր անդամոց ։

Այսպէս , ո՛ Հայր , քո Միածին
Զանձն իւր ողջոյն և զոր անձին
Մերկամարմին քեզ ձենձերէ ,
Այսպէս զենու զանձն 'ի բագին ։

## ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

### ԵՕԹՆԵՐՈՐԴ

---

ՑԱՒՔ ԽԱՉԵՑԵԼՈՅՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Օ՜ ի՞նչ սատ յառաջ ես զարմացայց ,
Օ՜ ի՞նչ ցաւեցայց , զի՞նչ կոծեցայց .
Միտք իմ ափշեալ և յիմարին ,
Եւ ուշաբարձ ցընդին ՚ի բաց ։

Կամ աստանօր կամ ոչ ուրեք
Բանի ՚ի սէր են ցաւք երբէք ,
Կամ աստանօր կամ ոչ այլուր
Օ՜ ի՞նչ է սիրել՝ յայտնին երբէք ։

Տեսէք տեսէք , սոսկամ հայել .
Ձեռս արկանեն յափշտակել
Ըզմերկ մարմին սարսռեալ ՚ի ցուրտ
՚Ի փայտ խաչին տախտապարել ։

Հերիք են , ա՜հ , դառն այդ տանջանք .
Զի՞նչ այլ կաղմէք , ազգ խըժականք .
Բա՜ն ըղձարեաց այդչափ մըթեր
Իցե՞ն արդեօք գերաստիճանք ։

Ո՞չ ինչ ըղձեղ սորայս տիպար ,
Ո՞չ ինչ մարմին պատառ պատառ
Ո՞չ ինչ ըղձեղ ըրնաւ չարժեն
Փըշովք ցետեալ գըլխոյն կատար .

Ո՞չ ինչ և խաչ 'ի լեառն հանեալ
Զարիւնաղանգ ուսովք բարձեալ ,
Եւ ճանապարհ՝ զոր նայն եհատ
Իւրով անմեղ արեամբ թացեալ ։

Ո՞չ զօրացաւ վըտակ արեանց
Ի յոչափ անգամ յայսչափ վիրաց
Ո՞չ զօրացաւ փոքր 'ի շատէ
Ըզտապ մեղմել զարիւնախանձ ։

Ոչ ինչ ազդեն բերել նահանջ
Ի յոչափ աղէտք լալահառաչ .
Յաձել նոցին անձէ զայրոյթ
Խանձեալ յարիւն խանձեալ 'ի տանջ ։

Նա 'ի յորսայս անկեալ դըրնի ,
Տայ սիրելւոյն համբոյր փայտի .
Եւ գիրկս արկեալ ձողին դըժնեայ ,
Խանդաղակաթ զայն պինդ ունի ։

Եւ մինչ ունի՝ ասէ այսոդոյն ·
„ Ո՛ղջ էր իմ խաչ , իմ խընդութիւն ,
Թէպէտ դըժնեայ թէպէտ և խիստ ,
Բայց և այնպէս դու իմ սիրուն ։

Այնչափ դու ինձ ակընկալի ,
Որչափ ահեղ յանցաւորի ։ ”
Բազում ինչ այլ ըղձաբանել
Չետ թոյլ արտօսր և ջոկ դաշձի ։

Բռնեն զանկեալն երես 'ի վայր ,
Շըրջեն 'ի յողըն կըռփահար ·
Եւ զառ 'ի փայտ մածեալ բազուկ
Հանգուցաւոր կաշկանդէ լար ։

Եւ այսոդունակ յերկուց կողմանց
Բղջեղ ձըգտեն քընքուշ բազկաց ·
Մոլեգնութիւն գազանային
Հաստաբազուկ օգնէ ձեռաց ։

Ոսկերք խախտեալք 'ի յօդուածոց
Ճ՛այթս արձակեն , չազգեն այլոց ·
Գոգցես բազուկք կորզին բռնի
'Ի յազուցիկ զօդից ուսոց ։

Եւ ոչ նըւաղ քակեն զյօդուած
Բարձից ծընգաց և զազդերաց ,
Յորժամ բըռամբ զոտըն պարզեն ,
Ոխ երկպատկէ զկորովլ բազկաց ։

Ռուամղ զինև . ով բաւական
Պառան արտասուաց դընել սահման ։
Օ՛ն որոտան սատարք չարին ,
Զունի զայրոյթ չափ և սահման ։

Կեզք ըղձըկտեալ բաղցուկ նորին
Ռըրկեալ պարան կաշկանդ ունին .
Կեզք արխնոտ վայրագ ձեռամբք
Ըզգըժընդակ շարժեն գործին ։

Սուրձ ծանրակիր յաջում խաղայ ,
Ունի աչեակ բևեռ դըժնեայ .
( Հաստ էր բևեռն երկայն թըղաւ ,
Սայր իւր բըթեալ և անխընայ ։ )

Տեսիլք դաշձաց՝ հրէշ ձառադէմ .
Յակն և յերես նըկարեալք են
Կատաղութիւն ուձիր անձառ ,
Օր 'ի ներքս անդ՝ մըտաբերեն ։

Նղո՜ւկ զինև . ե՞ր ասացից .
Հանեն զհեղոյս 'ի պատենից ,
Նաւ մըլեզին վարսեն թափով
Վարսեն 'ի ձեռս ու'ի թաթ ոտից ։

Խըզլին երակք խըզլին և նեարդք ,
Խըզլին ոսկերք , խըզլին և կարթք .
Պընման աչա արեան առուք
Պետոյ հանդոյն , այլ սիրտք վիմարդք ։

Երբ խիստ ուռամբ կըրկնեն զհարուած
Երբ լեառն և վէմք կըրկնեն զարկուած ,
Ըմբէ , քանի ցաւք սըրտառուչ
Մինչ 'ի յոսկերս գընան թափանց ։

Որդիս մարդկան կոչեցից ես ,
Յոր այսպիսի տըխուր հանդէս
Ոչ ինչ ըզսիրտ շարժէ ընաւ ,
Որ և շարժէ ըզխիստ երեզ ։

Որոց աղիք պըղընձային ,
Յորոց 'ի սիրտ բոյլք երկաթին ,
Յանձըն Միրօղ զայս ամենայն
Ընթաց աչօք թո՛ղ հայեսցին ։

Մինչ ես հայիմ զայս ամենայն ,
Թէ և սիրտ իմ պողպատ դաժան ,
Ըսկսի փըշրի ոչ հանդուրժէ ,
Եւ թինդս առնու կարեկցութեան ։

Ո՛վ աղետիս . Հայր երկնաւոր
Հայիս յորդիդ յանձնատոչոր .
Հայիս աչօք և կա՞ս լուիկ ,
Եւ քո յամէ՞ շանթ պատժաւոր ։

Ահա կանգնի խաչ բարձրացեալ ,
Եւ ընդ խաչին մարմին կախեալ .
Եւ ծանրութիւն բոլոր բեռին
'Ի վերան հանգչէր վերաբազմեալ ։

Ըղկախ մարմին 'ի վեր ունին
Միայն բեւեռք ըստուարագին,
Եւ ծանրութեամբ բեւեռայեց
Խոր պատառուածք վիրաց աճին ։

Տանջա՛նք դըժնեայ քըստմընելի .
Յայս տեսարան աղետալի
Թո՛ղ կափուցէ զաչս իւր արեւ ,
Մի՛ լոյս մի՛ հարկ տացէ երկրի ։

Զի եւ նոյն իսկ եղեռնութեան
Թո՛յլ արարեալ վայր մի ցասման,
՝Ըստմընեցի շարժեալ 'ի զեղջ
Ընդ լըրբութիւն աստուածասպան ։

Յայսչափ աղէտ դառնաչարչար
Նարդեն նախատ՝ ժանտութեան ծայր .
Որպէս եթէ խաչ գըլխովին
Տանջանք էին թեթեւատար ։

Ահա Աստուածդ ամենեցուն
Կախիս 'ի ձող տեսիլ նոցուն .
Մի՛ թէ փառացդ աստուածական
Արժանաւոր ա՞յդ լըրութիւն ։

Փրկի՛չդ Յիսուս , զի՞նչ խորհիցիս
Յորժամ կըրես դու զայսպիսիս .
Անպարտակիր սիրտ քո ժուժա՜յ
Հաւասարել այդչափ կըրից ։

Եւ այժմ արդեօք մըտօք անդորր
Որպէս այլոց տանիս բոլոր ,
Եւ երեսօք վայելչական
Բ՝ում ըղձանաց սիրատոչոր ։

Յայսքան տանջանս անբերելի
Ոչ հեծութիւն ոչ ձիկ լըսի ·
Բամբէ , լուռ կայ · անչափ ըղմեղ
Սիրէ սերտիւ , և ժոյժ ունի ։

Եւ ում տարցի սոցին բընաւ ,
Բայց դու միայն որում չէք բաւ
Համբերութեանն անպարագիր ,
Որպէս և ոչ ցաւոց գըրաւ ։

Արդ այս քոյին հանգիստ իցէ
Խընդրեալ ըստէպ և 'ի սըրտէ ·
Որ և անչափ քոց ըղձանաց
Յագուրդ և չափ ընծայեսցէ ։

Ա՞յս այն քաղցրիկ է դառնութիւն ,
Ախորժականն այս հեշտութիւն ,
Ա՞յս այն բերկրանք զոր ընդխառնէ
Սէրըն յիւր վիշտ յիւր անձկութիւն ։

Առաջին իղձ գիտեմ այլոց ,
Ոչ ինչ ըղձալ կըրից ցաւոց ,
Եւ վայելել յակընկալեալ
Բարօրութիւն յաջողուածոց ։

Որք որսորդաց են բերկրալի ,
Հասկք յուսացեալք երկրագործի .
Անքոյթ ափունք , նաւավարաց ,
Զօրագըլխին արմաւենի :

Քո իղձք տարփման են չարչարել ,
Սփոփանք քոյին նեղիլ լըլկիլ ,
Եւ ծայրագոյն ուրախութիւն ,
Զանագորոյն մահ մեռանիլ :

Քեզ խաչափայտ են հեշտութիւնք ,
Հունձք յուսացեալք՝ վըշտակրութիւնք ,
Եւ կեղեքմանք նաւահանգիստ ,
Արմաւենի՝ դառըն մահունք :

Լըռեմ , Մուսա , ափ 'ի բերան .
Ոչ ինչ է այն , լե՛ր խոստովան ,
Զոր ինչ մարթ է զայքան սիրոյ
Ասել երգել անճառական :

# ԱՊԱՐԱՐԴՈՒԹԻՒՆ

## ՈՒԹԵՐՈՐԴ

---

ԱՒԱԶԱԿՆ ՓՐԿԵԱԼ 'Ի ԽԱՉԻՆ ՕՐԻՆԱԿ

Է ՅՈՒՍՈՅ ԱՄԵՆԵՑՈՒՆ

Յուսացարուք որդիք մարդկան ,
Յաստուած էին է հաշտական .
Յաղթահարի , ոչ զոք մերժէ
Յանցաւորացն ոգեկործան ։

Նա և որոց փաստ ոչ կայցէ ,
Ողորմութիւն նորա մերձ է .
Ամենեցուն յամենայն ժամ
Դիւրամատոյց հեշտալուր է ։

Մի՛ ոք 'ի զեղծ չարագործաց
Ինձ զամլութիւն բերցէ զամաց ,
Մի՛ ոք ըզկեանս զանազանեալ
Մի՛ և ըզթիւ եղեռնութեանց ։

Խո՛ղ եղիցի համար նոցայն ,
Որքան 'ի ծով ալիք ծփան ,
Որքան տերևք 'ի յանտառի ,
Որքան տարափ՝ բուք 'ի ձմերան ։

Մ՛իայն 'ի շեղջ թո՛ղ եկեսցէ ,
Նոյն ինքըն ցաւ փաստաբանէ .
Խոչ անագան դառն արտասուաց
Նա երեսս ինչ դարձուցանէ ։

Տիպար լիցի մեզ Աւազակ ,
Կայր սա կախեալ բարձր 'ի դիտակ .
Եւ հեծութիւնք զոր արձակէր ,
Ոգեվարի էին քրքուանք ։

Արտասուեր նա , և դալկահար
Ընգեալ դիմօք առ տէր դառնայր .
Առնուլ արագ ըղձողութիւն
Լոկ այս միայն հերիքանայր ։

Բա՛բէ , ո՛րչափ ներգործեցին
Բանք և հառաչք աղերսարկուին .
Զուրախութիւն իմանալեաց
Վարձ և պարգև իւր ընդունին ։

Երջանիկ դու , թէ և կախեալ
Յանարգ հեծան նըշաւակեալ .
Որում այսչափ սուղ հեշտ վաստակ
Զաստեղս երկնից ետ ըստանալ ։

Թէ և բիւրուց գոս պարտապան,
Օ՜ որ և անձամբ ես խոստովան,
Նա մեռանիս մահ արժանի
Կենաց քոյին եղեռնական։

Բայց արդ զըղջմանդ առհաւատչեայ
Առձեռն ունիս զանխաբերայ.
Թէ ոչ պատրիմ, էանց այժմէն
Այդ դառնութիւն խաչիդ դըժնեայ։

Այժմէն դաշինք այժմէն մատիք,
Ըզգարձս ոտից խորտակեսջիք.
Ոչ ինչ նըմա քան զայս պարգև
Դուք մեծագոյն ընծայեսջիք։

Այժմէն ցանկայ նորոց պատժոց,
Այժմէն ցանկայ նոր խոցուածոց,
Նա յապաղանք միայն մահուն
Այժմէն նմա տանջանք ցաւոց։

Ո՜վ թէ, քանի՜ ես անձկայի,
Բևեռապինդ մահ այդպիսի.
Ո՜ ինձ տացէ ըղձքդ կըրել
Օ՜ այս երջանիկ պարգև բարի։

Բայց քեզ առ ինչ երկբայութիւն
Խընդրել ներումն և հաշտութիւն,
Որ յանցուածոց և տանջանաց
Կախիս ընկեր միահաղոյն։

Այժմ հայցուածոց ժամ է յարմար ,
Նա խնդրողին տացէ յօժար .
Որ արդ գնեաց մահուամբ իւրով ,
Զոր քեզ տացէ ձիր կամակար ։

Այլ նա , աւա՜ղ , դարձուցանէ
Զերեսս 'ի բաց առ 'ի նմանէ .
Եւ հայհոյէ ըզտէր տերանց ,
Զաստուածըն գոլ ներմին ժըխտէ ։

Իցէն արդեօք յորդիս մարդկան
Այսչափ անմիտք և մոլեկան ,
Զլանալ անձանց , աւա՜ղ , զինև ,
Զըւարթառատ ըզձիր այսքան ։

Վասըն սիրոյդ , ո՜վ Միածին ,
Որով սիրես զամենեսին ,
Եւ վասն յուսոյն զոր հրամայես
Ունել առ քեզ մեղաւորին ,

Վասն այսպիսի քոյին մահուան
Վասըն վիրաց բազմամասնեան ,
Որք 'ի բոլոր 'ի քում մարմնի
Գըրաւք սըրտիդ են իսկական ,

Այդ ինձ նըպաստ՝ զոր անօրէն
Խոտէ անձին անասնօրէն ,
Այդ ինձ հայցեմ , վիճակեսցի
Քո գըթութեամբ աստուածօրէն ։

Այսպէս ըղձեղ թող ծանիցեն
Ազգ բանական սիրեալքն 'ի քէն ,
Այսպէս ըղձիրս՝ ուր վասն մեր
Գութն ըստիպեաց տանել աստէն .

Այսպէս առ քեզ հեզահամբոյր
Նա 'ի ներբել ինքնայորդոր ,
Յոյսըն զերկչոտ հրաւիրեսցէ ,
Նա յանկուսցէ ըղձանցաւոր :

Քո գըթութիւն աստուածային ,
Որ եղկելեաց շնորհէ զերկին
Ոչ ըսպառի և ոչ երբեք ,
Ոչ անհըման լինի անձին :

Յոյս ոչ երբէք զոք լըքանէ ,
Անխըտրաբար ում և իցէ
Անդուստ 'ի նոյն 'ի յաղբերաց
'Ի նոյն վիրաց ծագեալ բըխէ :

Հիմ երկուացայց անքաջալեր .
Զոր 'ի մահուանդ առձայնեցեր
'Ի լուր յանցող Աւազակին ,
Զայն ինձ գըրեմ թէ ասացեր :

Հերիք թէ զայս միում ասես .
Միայն յայտնեալ 'ի ցոյց ածես
Ինէ որչափ յոյս ամենեցուն
Յանձին բերել քեզ փափաքես :

# ԱՊԱՐԱՐԳՈՒԹԻՒՆ

## ԻՆՆԵՐՈՐԴ

---

'Ի ԹՐՆԱՄԱՆԱԳԻՐ ԱՅՊԱՆՕՂՍ ԽԱՉԵՑԵԼՈՑՆ

ԱՍՏՈՒԾՈՅ

Ո՛վ ժամդ Սաղիմ աստուածամարտ,
Ո՛րան գլանցաւորս արիւնապարտ,
Զորըս մատնես դու տանջանաց
Որոց գլտան արժանապարտ։

Դո՛ւ հրամայես կախել զԱստուած
'Ի մէջ երկուց Աւազակաց,
Եւ մեռանել նովին մահու՝
Որով նոքայն ըստ օրինաց,

Զի կարծեսցի մեղաց կըցորդ,
Որ լոկ պատժոյն է բաժանորդ.
Այսպէս ըղձքո կըրկնես զոճիր
Յուցեալ ըղձքեղ քայն անհաղորդ.

Ազգ ամբարիշտ, արդ պարարեալ
Յողորմ արիւն զակըն դըժնեայ .
Խօշնին ահա կեանք կենսատուին ,
Դամեալ 'ի սպառ արեան նորա :

Բայց արդ, ով ազգ աստուածասպան ,
Գէթ լըռեցո զլեզուդ դարժան .
Ատելութեան զինչ այլ տեղի ,
Զինչ այլ մընայ դըժնէութեան :

Կախել 'ի խաչ կամք ձեր էին ,
Ահա կախի նա 'ի նըմին ,
Վէրս անհամար կըրել անպարտ ,
Ահա բազմաց տարաւ յանձին .

Եւ մահճանաւ ըղձմահ յուշիկ ,
Յուշիկ մահուամբ արդ ըսպանիք .
Արդ աղաչեմ, շատացարուք
Յայսչափ աղէտըս զոր ածիք :

Յայսչափ վըշտաց զինչ պակասէր ,
Բայց թէ մըտաց չէք խուրըն վէր .
Այորմ մասին 'ի սայր լեզուին
Պատառոտիլ խոցիլ պարտ էր :

Խաբիս, ով ազգ մեղսահօլով ,
Նա միշտ տանջանս մեծ և յոլով
Տարաւ մըտօք քան զոր բաւեաց ,
Վըշտաչարչար տանել մարմնով :

Նորուկ զինն . անդուլք են յայն .
Բոյք բարկութեան որում արժան
Տեսլեամբ արեան ցանձնուլ մեղկիւ,
Նովիմբ վառեալ վայրենանան ։

Ձայնք ամբառնան խառնափնդոր ,
Ուժնա որոշ լսէ բոլոր .
Իւրաքանչիւր բանք լուտանաց ,
Որովք կոծի, են թունաւոր ։

Ոչ միտք բանին ոչ խօսողին
Ոչ զանխլանան , զընդնէ զնոսին .
Զինչ և սոքիմբ նա ոչ կըրեաց
Տանջանարան կըսկըծագին ։

Սերըն աստի ըզմարտ դընէ ,
Ատելութիւն յայնըմ կուսէ .
Դառնագոյն ինչ թէ կայ տակաւ ,
Յաւելջիք դուք , Սերն յաղթեսցէ ։

Բարձջիք ըզձայն աղաղակաւ ,
Խախանձեսջիք ժըպիրհ լեզուաւ ,
Զիւր ցուցանել զաստուածութիւն ,
Յայտ յանդիման զոր պանծացաւ ,

Զանձըն թափել ժանեաց մահուն ,
Իսկ ձողոպրել 'ի տես նոցուն
Ըզթաթ ձեռաց ըզթաթ ոտից
Հաստահեղոյս 'ի յերկաթոյն ։

Թէ պինդ ունին բևեռք ըստուարք
Ըզնա 'ի ձող խաչին անարգ .
Այլ զի մընայ անզերծ 'ի նմին
Առ մեր սիրոյն մընայ անքակ :

Իոչ զոր խընդրէք , զանձըն փըրկէ ,
Զամենեսին զի փըրկեսցէ .
Զամենեսին կամի լինել
Փըրկանք արեան զոր կայլակէ :

Յայս սակս ահա գոլով իշխան
Ջընջել ըղձեզ 'ի թարթ ական ,
Երկայնամիտ ձեզ համբերէ
Անտես եղեալ եղեռնութեան :

Յայս սակս ահա ծանր են նըմա
Քան զիւր կըտտանս` յանցանք դըժնեայ ,
Որք զանգոսնեալ ըզՀայրըն իւր
Զարթուցանեն 'ի ձեր վերայ :

Եւ մի անզօր համարեսջիք ,
Թէ ոչ ըղձեզ պատժէ այժմիկ .
Զի հրամայէ ցասումն արդար
'Ի վրէժ քինուց մատչել յուշիկ :

Սովին ձեռամբ բևեռաման
Առնոյր ըզվրէժ ձեր յանցանաց .
Սովին ձեռամբ շանթս արձակէր ,
Թէ էր նըմա հաճոյք կամաց :

Շանթս արձակեր , գո՛րծ ողխրալի ·
Նա ոչ շանթեօք , հայցմամբք մըրցի ·
Կախեալ 'ի խաչ ձեր աղագաւ
Աղօթս առնէ աղերսալի ։

Եւ արտասուօք զորըս թօրէ ,
Ըզ հայր ընդ ձեզ 'ի հաշտ ածէ ·
Կատարութեան ձեր քաւութիւն
Զոր ոչ խընդրէք՝ ինքնին խընդրէ ։

Նա և զոճրոյն ըզծանրութիւն
Ա՛եղմէ որչափ կարողութիւն ,
Եւ ըզմահուն իւրոյ նախանձ
Ինքնին առնէ թեթևագոյն ։

„ Հա՛յր թո՛ղ , ասէ , մի՛ ազգըն կոյր
Լուծցէ մահուամբ զարժանըն իւր ·
Բաժանակից է յանցուածոց
Տըգիտութիւն աղետաւոր ։"

Զի՛նչ արասցես դու սիրողին ,
Այսպէս գըթածդ առ թըշնամին ,
Ո՛վ մոռացող քումըդ մեծի
Վայելչութեանդ աստուածային ։

Զարչարիս դու , բայց և այնպէս
Զարչարողաց ներումն հայցես ·
Նիւթ ներութեան և քաւութեան
Ըզմեր յանցանս առնել գիտես ։

Դու յանձն առնուս ընդպատուհաս ,
Պատուհասից մեզ ընդվարձ տաս .
Եւ զի տացես՝ սակաւ թուի
Ընեզ մահ դըժնեայ այսպխահաս ․

# ԱՂԱՐՃՐԴՈՒԹԻՒՆ

## ՏԱՍՆԵՐՈՐԴ

---

### 'Ի ԳՐԵԱԼ ՏԱԽՏԱԿ

### ԽԱՉԻՆ

Ու ա՞յս արդեօք պակաս մընայր
Կատականաց քոց 'ի համար,
Տախտակ գըրեալ եռալեզու,
Յառակ մահուդ եւ ծաղրարար։

Որում երկիր, որում երկին,
Որում եւ ծով պաշտօն տանին,
Ու այս ամէն արքայութիւնք
Սուղ քան ըղձքո են զարժանին,

Նոյնըմ՝ որ ինչ ընութեամբ էիր՝
Մի թէ արժան յայլըն փոխել,
Նոյն եւ պատճառք պատժոյդ եղեալ
Քեզ 'ի յանցուածըս համարել։

Օ՜ այս դատաւոր գըրեաց անուն,
Իբրեւ ըստգիւտ մեծ քո փխասուն,
Եւ հրամայեաց լինել այնմիկ
Արդար պատճառք քոյդ մահուն ։

Բայց նա գըրեաց իրաւացի
Ըզքեզ անուամբ Թագաւորի ․
Այլ ո՛ւր մեծն այն վայելչութիւն,
Եւ ո՛ւր արդեօք շուք արքունի ։

Մի՛ թէ գահոյք խաչըն յետին,
Եւ ծիրանիք արի՛ւնդ անձին ․
Մի՛ թէ բեւե՛ռք արժանաւոր
Զոյլ գաւազան ձեռաց քոյին ։

Եւ մի՞ արդեօք դահիճք դաժան
Ընդ սինլըքոր մոլի խուժան,
Եւ երկոքին հուղկահարուք
Են Թիկնապահք արքայական ։

Հայհոյութի՛ւնք ձայնք ողջունից,
Եւ նախատի՛նք բարբառք ծափից,
Գանձք ճոխութեան աղքատութիւնն,
Որ զքեզ կապտեաց 'ի յամենից ։

Այս առկախեալ մերկ 'ի մարմնոյ,
Ծանակ վարսեալ 'ի բուն ձողոյ ․
Այսպիսի՞ մեծ վայելչութիւն
Թագաւորի եւ Աստուծոյ ։

Բայց, ով Սաղիմ, ինձ հաւատա,
Սա արքայից հըզօր արքայ,
Զոր դարք նախկինք քեզ նըւագեն,
Թէ միւսանգամ ընդ ամպըս գայ։

Թող եղիցի դա պատժապարտ,
Եւ նախանձուդ զոհ մահապարտ.
Այդ պատժապարտ լիցի օր մի
Ձեր դատաւոր աշխարհադատ։

Քեզ ընծայեմք, փըրկիչդ Աստուած,
Զարժանաւոր ուղերձ փառաց
Եւ առաջի քոց աթոռոց,
Յերեսս անկեալ գետնատարած։

Թէպէտ այժմէն այլագունեալ
Ի մահուանէ կաս ըմբըռնեալ,
Թէպէտ ոչ ինչ արքայօրէն
Ունիս 'ի քեզ 'ի խաչ կախեալ,

Բայց ոչ քո մեծ վայելչութիւն
Ի սպառ ծածկեալ մընայ թաքուն.
Այն զի երկիր ծով և երկին
Տան նըշանակ իւրեանց սըգոյն.

Այն զի լուսին հեռաստանէ
Փութայ յընդդէմ երկնից մարզէ
Եւ զքաջարշաւ նըժոյգըս իւր
Սարեալ ընդ կրունկ դարձուցանէ։

Այն զի երեւք արեւակին
Ծածկեն իւրեւ ըզտիւ զերկին ,
Եւ զօրութիւն այն յանդիման
Քում տէրութեան աստուածային :

Դու արդ կոչես դըժգոյն զոգիս
Յաճխնացեալ մարմնոց 'ի դիս ,
Զարթուցանես եւ 'ի շիրմաց
Զ'ի խոր թաղեալ զոսկերատիս :

Դու արդ սանձես ըզԲելիար
Յանլոյծ շըղթայ մըշտախաւար ,
Եւ մահացեալ ըզմահ ընկճես
Ընդ քո ոտիւք յաւէժաբար :

Թող քեզ Սաղիմ ըմպահկեսցէ ,
Սիրտ մեր ըզքեզ վէհ դաւանէ
Քան զոր տիտղոս խաչափայտիդ
Վերտառութեամբն արձանակէ :

Նա եւ այժմիկ երբ մեղմովին
Թօշնիս հեւաս ըզշունչ յետին ,
Խոստովանիմք ըզքեզ անմահ
Աստուած եւ Տէր ամենայնին :

Նա եւ այժմիկ երբ կաս կախեալ
Դու ոգեսպառ յարեանց քամեալ ,
Մեք տըխրագին քեզ նըւիրեմք
Եւ զարտասուս եւ զուխտ սըփռեալ :

Եկեսցէ օր, յորժամ արքայք
Ի քո ճակատ կապեսցեն թագ,
Եւ առ բազմօք քով կախեսցեն
Զարժանաւոր ըզպատարագ։

Եւ առ խաչին պատուանդանօք
Գետնատարած կըրկնեալ ծընկօք
Հեղցեն զանձինս և զգաւազան
Ընդ քո ծակոտ գարշապարօք։

Կապիտոլեան տեսցէ, ափշեալ,
Զիւր Արամազդ բացամերժեալ,
Եւ քեզ միայն, որում արժան,
Բազմաբիւրեան կընդրուկս ածեալ։ ?

Ո՛ն խաչափայտ, և սուրբ մարմին
Պատառոտեալ 'ի պատկերին,
Եւ սիրտ կաթոտ՝ զոր խորահերձ
Սէրըն ճեղքեաց 'ի ծայր տիգին,

Եւ տատանկաց բոլորք դաժան,
Եւ դէմք ծըրրդեալք 'ի չիթ արեան
Լիցին ըստէպ որոց զըննեն
Պատճառք ցաւոց, քեզ բերկրութեան։

Եւ առ տեսիլ քոյ բեւեռաց,
Զխո՛րդ ո՛րչափ ձայնք հեծութեանց.
Սոքա բազմաց բազում անգամ
Ներգործեսցեն ըսպխս վիրաց։

Երկիր անուանս, որ կախեալն է
Ի բարձրածայր քառաթևէ,
Պագանէ արդ երկին պաշտմամբ,
Նա և աշխարհ յետոյ պագցէ ։

Յայս սուրբ անուն սարսափեսցեն
Ի զուր Նեսալք մռընչեսցեն,
Անդարամետք համագումար
Խոր յանդընդոց կաղկանձեսցեն ։

Բանի՛ քեզ փառք և օրհնի՛
Ի յժմու ամօթ յայնժամ լիցի,
Եւ օրհնի՛ քեզ յաղթանակ
Ում հանդուրժես ծանակ արդի ։

# ՆՎԱԳԵՐԳՈՒԹԻՒՆ

## ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

---

ԱՌ ԿՈՅՍ ՏԻՐԱՄԱՅՐՆ ՈՐ ԿԱՅՐ
ԱՌ ԽԱՉԻՆ

Ընդէ՞ր զՈրդւոյդ, Մա՛յր ողբական,
Ներկնեալ բարդես ցաւ անվախճան.
Մի՛ միայն խաչ առ 'ի տանջել
Մի՞ թէ նըմին չէ՞ր բաւական ։

Խաչ է երկրորդ քո Միածնին
Ո՛ր տեսանէ զմայր ցաւագին.
Սա վիշտս ունի ոչ դուզնաքեայ,
Գոյցէ բազմօք և սաստկագին ։

Տեսանես դու արեան կաթուած
'Ի ճակատուն բազմահարուած,
Ընդ լիճ լուսոյն գընալ թորել,
Նա ընդ տեսիլ այտից դիմաց ։

Տեսանես դու արեան վըտակ
Յոտից ձեռաց բըխեալ արձակ ,
Եւ ըզգօղուած ոսկերոտւոյն
Ա՛ռ ’ի ջըղաց քակտեալ համակ ։

Այսպէս ըղքոյդ որդեակ զընծել
Կոչէ՞ս Մայր դու , քեզ դիւր լինել .
Ա՞յդ քեզ հաճոյ , և մի՞ թէ զուգ
Աղէ՞տ տեսլեանդ ունի մերձել ։

Զես բաւական , որպէս կամիս ,
Բանըս յօդել ըսփոփելիս .
Յաւն ’ի բերան ըղբան գելու ,
Որ բարբառելըն յօժարիս .

Ոչ ’ի քըղանց ոչ ’ի մաքման
Գընջել զարիւն իւր սըրբազան .
Խաչ բարձրածայր ըղնա ունի
’Ի քոց ձեռաց յոյժ բացական ։

Եւ ոչ յորժամ մահ դըժպըհի
Օնորայն կընքէ վիշտ ցաւալի ,
Օաչըս նորա ըղկըկոցեալ
Ձեռք կափուսցեն քո մայրենի ։

Խնայեամ հայցեմ գոնեայ յորդիդ
Թէ ոչ գիտես խնայել սըրտիդ .
Տօչորի նա աղէխորով
Պոյդ արտասուօք որք ’ի յայտիդ .

Ոչ քեզ դիւրին և ոչ նըմին
Զունխս լինել մօտ առ խաչին.
Դու 'ի նորայն և նա 'ի քոյն
Մորմոքեսջիք սուգ ցաւագին։

Զօր ինչ կրեցեր, Բանդ Հայրական,
Ինէ ոչ դիտէր կըրեալ քեզ զայն,
Յուրաստ լինէր իբր յանհնարից
Խժդժութիւն նոյն իսկ դաժան։

Ընդ քեզ կոչեմ ինձ 'ի վըկայ
Նու ըզօրտիդ առհաւատչեայ,
Խոցուածք ծնողիդ քան թէ Որդւոյդ
Այրեն ըզքեզ դառն և դըժնեայ։

Նա և ըզսոյն, Մայր բազմասուգ,
Զանգիտանաս, գիտես յատուկ.
Խորաքանչիւր տանջանք նորա
Են մեղմագոյն քան ըզքո սուգ։

Կըսկիծ նորա, նոյն և քոյին
Մասամբ իւիք փոքր 'ի շատին
Դնասցէ ընդ քեզ, թէ յանձն առցես
Դընալ և դու յաչաց նորին։

Պատմեսցեն այլք քեզ 'ի վերջէ,
Ո՛ր բանք յետինք մի 'ստ միոջէ,
Զո՛ր պաղատանս և վասն որոց
Պաքեալ շըրթամբք նա մատուցէ։

Օ՜ինչ լինչ արբցէ 'ի ծարաւին,
Օ՜ինչ ձոր աղբերս կերկերագին,
Ո՛րպէս և Ս՝որդ անյիշատակ
Ոչ եղիցի 'ի ժամ յետին:

Ե՛րբ ամփոփէ զաչըն վատեալ,
'Ի խիստ փայտի զկեանսըն կընքեալ·
Ո՛րպէս զխաչեալ կողըն Նորա
Ձերձցէ նիզակ 'ի խոր մխեալ·

Օ՜այս ամենայն այլք պատմեսցեն.
Իսկ դու դալկաւ հարեալ անդէն
'Ի մայրենիդ կրեսցես 'ի սիրտ,
Օ՜որ նա կըրեաց մարմնով յաղգէն:

Օ՜ինչ արասցես 'ի հանդիպէ,
Թ՝է զոր լըսես դու 'ի բայցէ
Խոցք կարեվէրք լիցին 'ի սիրտ
Իւրաքանչիւրք 'ի Նոցանէ:

Եղո՛ւկ զինև. անխախուտ կայ,
Ը՛նդ առ ետեղ արձանանայ,
Եւ զարիւնոտ ըզքուն խաչին
Ցանդ արտասուօք իւր լըւանայ:

Եւ զի ըղձեմ արտօսրագին
Դարձուցանէ յեթեր վերին,
Եւ զի պըշնու ակընկառոյց
Ըղեխորով յիւր Միածին:

Ո՛վ աղետիս, զի՞նչ գործեցէ·
Կացցէ՞ անդէն, ցաւն արգելէ·
Տեղի՞ տացէ, այլ բռնադոյն
Սէրն առ խաչին ըղձա կապէ։

Ա՞յս քո օրէն, Տէ՛ր դառնացող,
Այսպէս յօդես սիրտըս սիրող·
Արքայութեան քո իրաւունք
Ի՞բր անողոք, ե՞բր աններող։

# ԱՂԱՐԱՐԳՈՒԹԻՒՆ

## ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

---

'Ի ԾԱՐԱԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ
'Ի ՄԱՀՈՒԱՆ, ԵՒ 'Ի ԹՈՂԱՆԱԼՆ
ՅԵՐԿՆԱՒՈՐ ՀՕՐԷՆ

Որդ ամենայն ինչ պակասի
Ում զամենայն 'ի բուռն ունի.
Եւ խընդըրողին յիւրըն ծարաւ
Պակասի ումպ ցուրտ բաժակի.

Զոդիս նորա քաղեալ էին
Քիրտն և վաստակ արիւն վերջին,
Եւ ցայգն ողջոյն հըսկեալ անքուն
Յայնչափ կըտտանս 'ի դաւնագին.

Եւ բազմաքայլ ուղին դաժան,
Եւ ծանրակիր փայտին հեծան
Յուսըն բարձեալ յարիւնաբուխ,
Եւ օրինակ անգութ մահուան.

Ջուր մատուցէք արագ արագ,
Պիւր է պաղքոյն ջրոյն կայլակ,
Զոր հազիւ հազ հեզաբանէ
Սրցեալ 'ի քիմս լեզուն ցամաք։

Ո՛վ վայրենի գազանութիւն,
Զլանան և ջուր տալ մեռելոյն.
Մատուցանեն յումպ ըղբաժակ
Ըզփրփրադէզ 'ի դառըն Թոյն։

Բայց և այնպէս զայն ճաշակէ.
Եւ դառնութիւնն, որ յայնմանէ,
Զորկոր ըզքիմս և ըզլեզուն
Քան ըզծարաւ կիզեալ այրէ։

Ո՛հ, մխսանգամ, գետք աղբերաց,
Ելջիք 'ի կորդ առապարաց.
Ըզճանապարհ ձեզ հորդեսցեն
Սեմք խորտակեալք առ 'ի վրշտաց։

Որ առողէ զանջուր բանջար
'Ի ցօղ յանձրև լիապատար,
Որ սահանօք զարնանային
Զբարթ առնէ զգօս արտավար,

Որ 'ի յականց կոչէ զաղբիւր,
Եւ յաղբերաց վտակըս բխուր,
Արդ Թալկացեալ հասանիչ նոցա
Ձեզ կարօտի 'ի նըպաստ խուր։

Օ՜ ինչ աստանօր բարբառեցայց ·
Զիք ինչ գանգատ ըղըւեռայց ,
Ոչ ըղխաչէն ամենեւին ·
Լոկ ըղդըժնեայ ծարաւ գուժեայց ։

Նա որ ամէն վըշտաց տարաւ
Այնչափ երկար լըռւինկ 'ի վրաւ ,
Հաւատամ ինձ, ոչ լոկ ջըրոց
Նա պապակեալ ունի ծարաւ ։

Օ՜ որ ինչ խընդրէ նա սփոփութիւն ,
Պաքեալ յայնչափ վըշտակրութիւն ,
'Ի մէնջ խընդրէ , ոչ յաղերաց
Օ՜ անձկալին զայն ըսփոփութիւն ։

Սղո՜ւկ եմ ես · ոչ ինչ աղդին
Նա և 'ի մեզ գանգատք վերջին ·
Նաւ մեք անդութք մատըռուակեմք
Դառնաթորմի բաժակ նըմին ։

Բայց ակն ունիմ թէ 'ի յերկնէ
Գիւր և օձան նըմին հասցէ ·
Ունկըն դիցեն նըմա երկինք ,
Ոչ 'ի դերև խընդիրն եղցէ ։

Բա՛րձէ · Եթերն այն իրաղգայց ,
Լինի միայն խաւարազգեայց ·
Արգայ ըղՏէր , ողըայ գհատիչ ,
Բայց յօգնելոյ լինի 'ի բաց ։

Գոնեայ ընդ քեզ շարժեսցէն, Հայր,
Վերջին թռաչք որդւոյդ արդար.
Հայցէ 'ի քէն ձեռնտուութիւն
Որհատական ձայն հոգեվար։

Հայիս, զիմրդ շարժմամբ յետին
Աստ անդ անձէ զաչս իւր ոսին.
Եւ հազիւ հազ թոյլ պարանոց
'Ի վեր ունի ընդգլուխ նորին։

Թէ և քաղլին նիաղ ոգիք
Արեամբն հանդերձ վըտարանդիք,
Եւ լըքանեն զմարմին թափուր
Ոյժք առ ցաւոց վայրավատինք,

Բայց և այնպէս զայլադունեալ
Տեսիլ դիմաց վերամբարձեալ,
Որպէս զիարդ հընար նըմին՝
Աչօք շըրթամբք ընդ Հայր խընդրեալ.

Եւ հառաչեալ խորոց սըրտէ
Հեկեկանօք աղաղակէ.
„Եւ դու՛ թողուս և լըքանես,
Հա՛յր սիրելի, զիս 'ի բացէ։”

Բանք որ ըստէպ զՀայր շարժեցին,
Արդ ոչ շարժեն, թէ և յետին.
Գոգցես ընդ Հայր գորովագութ
Թողեալ լըքեալ զիւր Միածին։

Հայր բարեգութ , և ոչ իսկ դու
Յորդեդ գըթաս 'ի մահացու ,
Եւ ոչ այն գութ հայրագորով
Ընդ յիշատակ մըտաց թողու ։

Եւ ոչ շարժէ ըզքեղ հասակ
Մաշեալ 'ի ցաւ մըշտատևակ ,
Եւ ոչ նոյն իսկ մանկըն շարժէ
Նաուիթ մանկուն , սէրըն միակ ։

Պարտ է և այսմ հարկ է ժուժալ ,
Փըրկիչդ Յիսուս ամայացեալ ,
Օ՜ի հայր քո քաղցր յամենեսին ,
Վայժ ունիցի քեզ խըստանալ ։

# ԵՂԵՐԵՐԳՈՒԹԻՒՆ

## ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

### ԱՌ ՏԻՐԱՄԱՅՐՆ ՅԵՏ ՈՐԴՒՈՅՆ ՄԵՌԱՆԵԼՈՅ 'Ի ԽԱՉԻՆ

Մեռաւ ահա, և խոնարհի
Կոր պարանոց զլանջօք սըրտի ․
Մեռաւ ահա, և ըզխաչէն
Կախի 'ի վայր բեռն անհոգի ։

Օ՜ ի՞նչ արդ խորհուրդք, զի՞նչ դառնութիւն
Յաղէտ սրտիդ, Մա՛յր Թաղծագոյն ․
Օ՜ խո՛րդ այս մահ ոչ նոյնաբար
Ըզքոյդ բառնայ կենդանութիւն ։

Ո՛վ աղետիս ․ եբարձ եբարձ
Դա առաւել քան զշունչ կենաց,
Յորժամ ըզնա, որ էր միակ
Քեզ յոյս համայն և կեանք, եբարձ ։

Ո՜հ, երկաթի աղէք նորա,
Ու քեզ ոսոխ վայրագ դըժնեայ,
Որ միանգամ այսըմ սըգոյ
Պըտաւ պատճառ քեզ անխընայ։

Զի՞նչ բարբառիմ. ես ինքն եմ այն,
Որ զայլ խընդրեմ, յանձին ըզգամ.
Զինէն լինիս, ո՜վ Տիրածին,
Լըռիկ զիմօք դու ամբաստան։

Ո՜չ ինչ են պէտք բանից լեզուին,
Աչք և արտօսր հերիք խօսին.
Զայս արտասուաց լըւայք բարբառ,
Ծանեաք զիմաստ որ ՚ի նոսին։

Ո՜հ, ցաւագին Մա՛յր անապակ,
Խոստովանիմ ինձէն գիտակ.
Կըսկիծք քո այդ՝ յանցանք են իմ,
Պուղքա գործոց իմ յիշատակ։

Ես ինքն եմ ես, այն վնասակար,
Վէրքըդ՝ զոր լաս՝ իմ է արար.
Այլ և յոճիր ըսպանութեան
Ձեռք իմ շաղեալք յարիւնն արդար։

Յայս ընկըղմեալ վըշտակրութիւն
Զորդիդ և զքեզ իմ շամբշութիւն.
Միտք իմ ցընդին ամօթապարտ
Ընդ գործեցեալն եղեռնութիւն։

Սակաւ է աստ ցօղ արտասուաց .
Նաեւ ոչ արիւն իմ երակաց
Թէ քամեսցի ըսպառըսպուռ
Մինչ 'ի յետին շիթ կայլակաց ,

Նաեւ ոչ վաղերք թէ սկիւթականք
Զիս յօշոտեն յախերականք ,
Կամ ձիախրոխտ թէ դէմ ընդդէմ
Ճեղքեալք հերձցին մարմնոյս անդամք ,

Նաեւ ոչ 'ի սաստ սիկիլեացի
Դատապարտեալ Բռնաւորի
Թէ տապակիմ 'ի փոր Ցըլուդ
Որ Պերիղղէ պըղընձաղի , 3

Նաեւ ոչ եթէ երկինք բոլոր
Դըժնեայցին յիս պատժաւոր ,
Լիցի երբէք պատիժ հանդէտ ,
Զարեաց իմոց արժանաւոր ։

Նա եղկելիս զի՞ գործեցից ,
Զիմ առագաստ յո՞ դարձուցից .
Նաեւ ո՞ ինձ յոյս , ո՞ ապաւէն ,
Նաւահանգիստ ո՞ւր ես գըտից ։

Առ վէրըս քո , Որդիդ Աստուած
Դառնամ լալեօք աղերսահայց .
Դոքա միայն հըզօրք քաւել
Զիմ ահագին զոձիր չարեաց ։

Դոքա լիցին յոյս նէրութեան ,
Դոքա , հայցեմ , յոյս գըթութեան ․
Կամ այդոքիւք , կամ ոչ իւիք
Գըտից ներպաստ ինձ օգնութեան ։

Դաժանութեանն իմ յիշելիք
Ի՛նձ գըթութեան լիցին գործիք ․
Եւ օգտեսցէ՛ն ինձ այն խոցուածք ,
Զոր գործեցին իմըս դաստիք ։

Այսպէս անշուշտ ․ Որում սատար
Ինքնին եղէ թըշուառաբար ,
Այս մահ միայն՝ իմ յոյս միակ՝
Ընդ իս ընդ քեզ գոլ հաշտարար ։

Ասեմ ասեմ , թէ և լըսել
Մարսուռ ածէ և սարսափել ․
Նոյն իսկ ոճիրք աստուածասպանք
Աջակցեցին մեզ սատարել ։

Ո՞ հաւատայր , խորհուրդ խորին ․
Մեղուցելոյն մեղք օգտեցին ,
Դառըն պըտուղք մեղաց մերոց
Են փըրկութիւն մերոյ ազգին ։

Որոց պատժոց արժան գըտայ ,
Զայն ինքն Աստուած արեամբ իւր տայ ․
Յոր ժանտացայ թըշնամանօք ,
Մահապարտիլ վասն իմ ժուժայ ,

Ի՞բր խրաւամբք ոչ պատժեցայց,
Ի քոց անշէջ ոչ այրեցայց
Թէ անսահման սէր այսպիսի
Ու ըզսըրտիս փըշրէ հաստուած։

# ԵՂԵՐԵՐԳՈՒԹԻՒՆ

## ՉՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ԱՌ ՄԱՅՐՆ ԱՍՏՈՒԾՈՅ, ՈՐ ԳՐԿԱԲԱՐՁ ՈՒՆԻ
ԶԱՆՃՆՉԱՑԵԱԼ ՄԱՐՄԻՆ ՄԻԱԾՆԻՆ

*Ըզքեզ տեսից, Մայրըդ ցաւած,*
*(Եւ ոչ 'ի սիրտ աղետացայց,)*
*Գիրկըս արկեալ ըզՄիածնիդ*
*Խոց անդամովք արեամբ ներկած ։*

*Զամամ լալով ես հայցիմ*
*Մօտակ ըղխել զայտիւք նորին ,*
*Եւ արգելից զիմ արտասուաց*
*Ըղձափաւոր չիթ դառնագին ։*

*Ահա ընդ քեզ ընութիւն էից*
*Իւր արարչին հառաչակից*
*Եւ վըշտագնեալ սըգայ ըղմահ,*
*Ողով և դուն յոքնաթախիծ ։*

Զի մի արև տեսօղ լիցի
Զօձիք մահուս աղետալի,
Զերեսս 'ի բաց դարձուցանել,
Զաչերն քօղէ ըղտըխրալի։

Հող ընդ ոտիւք արդ մըռընչէ
Եւ կարծրութիւն վիմաց ձայթէ.
Աղետալուր բոմբիւն դօչման
Յաստեղաց լուր վեր ելանէ։

Եւ սըգաւոր դասք ուրուականք
Աստ անդ յածին թափառականք.
Խամանեն ցաւք և ընդ շիրմօք
'Ի ցուրտ աճիւն յոսկեր կուտակ։

Ոչ ոք բընաւ 'ի տեսողաց,
Ոչ ոք բընաւ և 'ի դահճաց
Ընթաց աչօք դառնալ 'ի տուն
'Ի մահուանէ աստի զօրեաց։

Նովին ձեռամբ որով վայրագ
Շարժեաց 'ի գան զանգութ մըտրակ,
Որով խըլթեաց՝ որով խոցեաց,
Նովիմ բախէ զկըրծից տախտակ։

Բազում և այնք 'ի խուժանին
Որով շըրթամբք հայհոյեցին,
Նովին հեծեն նովին լուտան
Զիւրեանց ցասման թափ դիւագին։

Եւ մինչ այսպէս ամենեքեան
՚Ի սուգ մտեալ հեծեն ողբան,
Ի՞մ միայնոյ սալանայ սիրտ
Քան ըղհերձեալ ժայռ անսասան։

Ե՞ս միայնակ եղէց ժուժկալ
Յաղէտ մահուդ անշարժ մնալ,
Եւ ակնարկել զերես քոյին
Արտեւանամբք երաշտացեալ։

Այս խրստութիւն ինձ դէպ ոչ է,
Տիպ լացողիդ զիս խոցեսցէ.
Եւ որպէս արդ խոցէ ըզնոյն,
Հայցեմ 'ի քէն, միշտ խոցեսցէ։

Եթէ 'ի վէրս Որդւոյդ հայիս,
Եւ նոյնքանեօք 'ի սիրտ խոցիս,
Տո՛ւր զի նոքին և յեղկելւոյս
Յիմ տարրացին 'ի խոր սրտիս։

Եթէ համբոյր մատուցանես
Եւ արիւնեն տատասկք զերես,
Արսկիծ քո այդ տոչորեսցէ
Եւ մաշեսցէ զիս դառնապէս։

Տեղ որ զորդւոյդ ըզսիրտ եբաց
Եթէ ընդ քոյդ մըխի թափանց,
Նա և ընդ իմ սիրտ երկաթի
Մ՛տցէ ելցէ նոյն թափանցանց։

Եթէ դահճայց դէմք դիւական
Դեռ քոյ աչաց են արհաւիր,
Ընտանեցայց ես 'ի նոսա,
Նզովեցից զանձին զոճիր.

Եւ թէ յորմոց և աղբերաց
Զարթնուն 'ի քեզ ցաւք տրտմազգեաց,
Ողբիմք և իմ զօրհանապահ
Բորբոքեսցին ցաւք անձկայրեաց.

Եղէ պատճառ ցաւոց քոյին,
Եղեց նաև կըցորդ նոցին.
Որով ըղքոյդ կըցորդութեամբ
Սուգ մեղմեցից, Կոյս ցաւագին.

Իցէ արժան ինձ մոռանալ
Երբ առ խաչին կայիր դեղնեալ,
Ծնէ զինչ որդւոյդ քո Միածնի
Եղէն վերջին բանք ասացեալ.

Երբ 'ի յետին շունչ հասանէր,
Նա լու 'ի լու ինձ բարբառէր,
Որ ինձ մայրն էր, արդ քո լիցի,
Ըզմօր մերոյ պահեա՛ ըզսէր.

Ըստի աճեաց սէր գըթալի,
Եւ աղաչեմ միշտ աճեսցի,
Որ զիս ունի անտի և այսր,
Եւ քեզ ողջոյն զինքըն պարտի.

Ամենայն ցաւք զորըս բերես ,
Ինձ հասարակ լիցին ընդ քեզ .
Ապա թէ ոչ զանուն որդւոյ
'Ի զուր է ինձ կըրել այսպէս .

Եւ զի՞նչ արդեօք . Մօրըդ խոցուած
Ո՛չ և որդւոյս լիցի հարուած .
Օ՜ այս , այլանդակ եղեռնութիւն
Ատեայ նոյն իսկ բարք վայրենեաց .

Ոչ շատանամ թէ ձայնակից
'Ռում հեծութեան զանձն իմ եղից .
'Ի ցաւել քո , սիրելի՛դ Մայր ,
Մեռցի՛ անձն իմ , այս ուխտ ըղձից .

Տա՛յր ոք արդեօք ինձ վիճակել
'Ի նոյն 'ի սուգ հաշել մաշել .
Ո՜ւր երանի , թէ զայս լիցի
Իմոյ մահուն պատճառ ասել .

## ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ

### ՀՆԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ՊԱՐՏ Է ԱՆՄՈՌԱՑ ՈՒՆԵԼ ԶՅԻՇԱՏԱԿ
ՎԻՐԱՑ ՔՐԻՍՏՈՍԻ

*Դու, որ պըշնուս 'ի խաչելոյն*
*Պատկեր ցաւոց աղետագոյն,*
*Զինչ և որքան վէրքս տարաւ*
*Աստուածորդին առ քո սիրոյն,*

*Եւ այնքան վէրս որքան եղին*
*'Ի ցաւատեալ տեսցես մարմնին.*
*Եւ ինչ արհեստք ըզթիւ գունովք*
*Նըկարագրել կարողասցին:*

*Սակայն ըզսիրտ յափըշտակէն,*
*Զակընկառոյցն 'ի սպառ ձըրգեն.*
*Որոց անձնիւր յանձնիւր տեղիս*
*Գեղեցկագիր միշտ շողշողեն.*

Տես թէ զիա՛րդ լայնապատառ
Կող իւր և սիրտ բաց են 'ի սպառ.
Օ՜ խա՛րդ լցեն ձեռաց ոտից
Խոցուածք վիրաց, զոր նայն էառ։

Դոքա չունին ըսպխանալ,
Կացցեն մնասցեն անկից բացեալ,
Ցորչափ մնայ որ առ զնոսին
Մեր աղագաւ մահ Ճաշակեալ։

Պահէ զնոսին նա յաղթական
Իւր յաղթութեանն անջինջ արձան,
Եւ նշանակ ախորժելի
Ըստրըկութեանդ ազատութեան։

Օ՜ այդ խոց վիրաց ներգործեցին
Ոչ թէ բևեռք, ոչ սայր տիգին,
Ոչ ամբոխին և ոչ դահճաց
Կատաղութիւնք դըժոխային.

Ա՛յլ Սէրն յաւէտ, որ այսքանեաց
Նախապատճառ անբաւ վըշտաց,
Եւ այսքանեաց վիրաց տանել
Ըզմեծն Աստուած բըռնադատեաց։

Հատո՛ զարժանն ըղհաւասար.
Գուցէ խնդրես, իւ այն վըճար.
Կամ զի՞նչ կամի նա որ ցանկայ
Օ՜ իւր երախտեաց կըշիռ արդար։

Ոչ պահանջէ քեզ յանձն առնուլ,
Ոտից ձեռաց գամոնք հերձուլ.
Ոչ ծայրասուր 'ի տատասկաց
Անարից գըլխոյդ ծակ ծակ ցելուլ։

Ոչ զի վարչաց հարուածք ազդոյ
Ցաւատեսցեն զանդամըս քոյ,
Եւ ոչ զի տեգ շըռընչաձայն
Ընցցէ թափանց ընդ կողըս քոյ։

Միայն վերաց զիւր յիշատակ
Պահել 'ի քեզ ունի փափաք.
Օ՜ ինչ արդ դիւրին քան թէ յիշել,
Օ՜ ինչ այլ ախորժ դոյզըն վաստակ։

Այս շատ նըմա, թէ 'ի մըտի
Տանիս անդուլ զհարուած վիրի,
Օ՜ որ վասըն քո նա հարուածեալ
Տարաւ անմեղ յիւրում մարմնի։

# ԱՂԱՐԱՐԳՈՒԹԻՒՆ

## ՎԵՇՏԱՍԱՆԵՐՈՐԴ

---

ԵՒ ՄԵՔ ՊԱՏՃԱՌՍ ՏՈՒԱՔ ՑԱՒՈՑՆ

ՔՐԻՍՏՈՍԻ

Վայ 'ի ձեռս իմ ճարտար նըկար
Խաչափայտին արիւնայար ,
Յորում կախի Աստուածորդին
Վիրաւորեալ դառնաչարչար ։

Սա արծարծէ յոլովակի
Ըզհուր նիրհեալ զիմոյ սրտի .
Եւ զի բըխէ յաչաց իմոց
Ըզցամաքեալ արտօսր աղի ։

Այժմ իսկ յառեալ 'ի սոյն աչօք
Սոյն և բոլոր ուշիւ մըտօք ,
Ըզկատաղի ժողովըրդեան
Զըննէի գործ զարմանալեօք ։

Զընկէր ես զոտից ձեռաց
Ճաստահեղյս լայն պատառուած .
Եւ զի յողջոյն նորա մարմնի ,
Ուր մի միայն վէր և խոցուած .

« Ո՜վ դըժընդակ գործ դիւազին ,
Ըռձայնեցի ես զայրագին .
Ըզքեզ , Բարձրեալդ և բարերար ,
Ձեռք ազգակիցք այսպէս հարին .

Բայց քեզ ո՜վ , ազգ աստուածասպան ,
Փոխան ընդ այս եղեռնութեան
Ածցէ կորուստ զարժանաւոր ,
Վըրէժ արդար սըրտմըտութեան .

Ըզձեր ժանիս սովըն դըժնէ
Միմեանց 'ի միս յեսանեսցէ .
Կերիցէ մայր զաղիս անձին
Զոր նայն երկնեաց յիւր արգանդէ .

Տապաստ անկցիս 'ի սայր սըրոյ ,
Լըցցի տաճար ճապաղեօք քոյ .
Գոռ և ոսոխ ընդ քո հարուած
Ճեղջիք յաչաց աղբիւր լոյս .

Եւ խաղասցէ յաղթող վիրագ
Գաղանանալ քոյդ յաւերակ ,
Քանդեսցէ նա , ցորչափ մընայ
Քար առ քարի կից և անքակ .

Այլ անգամ այս ամենայն.
Երկիրդ այժմէն բաց ըղձերան,
Այժմէն հայցեմ. չէ շատ սարսել
Առ այսպիսի ոճիր դաժան:"

Երբ զայսօրիկ և աւելի
Հեծմամբ ցասմամբ պատրաստէի,
Եւ ասէի, գնամ ուրանօր
Արդար զայրոյթ վարէ զոգի,

Անդէն և անդ ինձ թըւեցաւ
Որպէս թէ օդ ըշկահեցաւ,
Զոր օրինակ թռչունքն առնեն
Երբ զամպ հերձուն թեթև մագլաւ:

Կայր Սէր յոտին, բայց ոչ պատեալ
Սովորական զինուք վառեալ,
Ոչ մանկական գեղեցկութիւն
Ընդելական, յայնըմ ցուցեալ:

Ոչ ըղթիկանց կապարճք կախին,
Եւ ոչ աղեղն ոսկի փըքին,
Եւ ոչ նորա աջ արծարծեալ
Ըզջահըն վառ 'ի մէջ օդին:

Այլ չէն ունի նա ըղնիզակ,
Այլ չէն ունի դըժնեայ մըտրակ,
Բևեռս անգութ և ծայրասուր,
Խայթոցաւոր փըշոց տըրցակ:

Ու պակասեն և խիստ պարանք ,
Ու պըղընձի սարեաց կապանք ,
Եւ ոչ խուկ խաչ դըժոխակիր ,
Զորս էր ներկեալ արեան հոսանք ։

Զխո՛րդ տեսեալ յապուշ հարայ
Եւ հիացեալ ընդ դէմ դըժնեայ ,
Ընդ այս ահեղ և ընդ գործիս
Այսպէս խօսել յարձակեցայ ․

„ Մա՛նկի՛կ քաղցրիկ , զի՞ կայ և քո
"Ի այդչափ անգութ զէն կազմածոյ ․
Ընդէ՛ր փափկիկ ձեռօք բառնաս
Կազմած զինուց , որք ոչ են քո ։

Սըլաք նետից քոց մահական
Զոր արձակես յորդիս մարդկան ,
Կիզուն լափեն դըժնեայ բոցով ,
Բայց և այնպէս մարդիկ չատեան ։

Այդ զէնք վայելք վայրագ Բեսսեանց
Սարմատացւոց , ժանտ Գեղոնեանց , կ
Եւ որ նըման գազանամիտ
Արինախանձ բարբարոսաց ։ "

Այսպէս առ նա գանգատ կալայ ․
Այլ նա իսկոյն դիմօք դըժնեայ ,
„ Ո՞րդ , ասէ , յանցուցելոց
"Ի՞ո բարկութիւն անէծ կարդայ ։

Զի ընդ Սաղիմ ամբաստանես ,
Պատուըն թանիւք երգիծանես ,
Զև կանխագոյն իրաւեկ լեալ ,
Ո՛չ յայդ ոճիր յանդուգն այդպէս ։

Այնըր մահուան աղետալի ,
Յորմէ դողաց երկիր ւարփի ,
Ես ինքն եղէ ես գործօնեայ ,
Ես ինքն եղէ պատճառ նախնի ։

Բայց ոչ զղջամ ես պարտաւոր ,
Այլ և պարծիմ ընդ գործըս նոր ,
Աստի պարծանք աստի շուք մեծ ,
Զըքնաղ գործոցս իմ հրաշաւոր ։

Զի՛նչ առանց իմ կարող էին
Ոխ և զայրոյթ դահճաց գընդին ,
Եւ առանց իմ ո՞ր գեղարդունք
Խոցել զԱստուած կարող էին ։

Ես ինքն ինձէն նըմին ետու
Մարմին վըշտաց և մահացու ,
Նոյն և զանդամ գողտր և փափուկ
Ընդունական գանից մահու ։

Յերակ նորա ես ինքն հեղի
Աւիշ արեան զի թափեցի .
Յինէն ունին և տիեզերք ,
Զի կեղտ մեղաց իւր լըւասցի ։

Ման այն բարձի զանձամբ և յաջ
Փուշ արիւնոտ հեղոյս և խաչ.
Փոխան իմոց նետից ձօձէ
Գեղարդն ահեղ բազմաշառաչ։

Բայց դու 'ի քեզ միտք անսասան
Յայս 'ի զինուց անյաղթական.
Ունիս դու սիրտ, ում ոչ զօրէ
Յաղթանակել Սէրն յաղթական։

Խորտակեցի զախ տապանաց,
Լաւ հարկեցի զոգիս շիրմաց,
Եւ կակղեցան իմով բոցով
Զոյլք կարծրակուռ ժայռից վիմաց։

Ու քեզ միայն ոժք պակասին.
Գոյ մեծագոյն ըզգայութիւն
'Ի նոյն իսկ ժայռ կարծրատեսակ,
'Նոյն իսկ յաճիւն գերեզմանին։

Ոտնակառեալ ըզկայ առնու
Իմ յաղթութիւն երբ վաղս առնու.
Յարկանել քո իմ ընթացից
Դըժուարահուն խոչ ոտնառու։

Հիմ արդ զամբոխ բամբասէիր
Դու քան ըզնա անկարեկիր.
Ըզմեղուցեալ ոչ բարիոք
Յանդիմանէ այր մեղսակիր։

Եւ դու այսմիկ կատաղութեան ,
Ոչ սուղ եւ դու հաղորդ յանցման ,
Եւ դու ունիս մասն և բաժին
Յաղխողորմ այսչափ մահուան ։

՛Եոքա զանդաման արիւնէին
Ի դան 'ի վէր զոր ածէին .
Այլ այն խոցուածք զոր դուն առնես ,
Ի սիրողին սիրտ Թափանցին ։

Զարեաց նոցա զեղեռնութիւն
Բազմօք մեղմէ ւանդխտութիւն .
Ոչ էր այնպէս բացածանօթ
Զօրականին Աստուածութիւն ։

Իսկ դու յորժամ անօրինես
Անգիտանալ ոչ ինչ գործես ,
Եւ ոչ միով պատրըւակաւ
Ըզժանտութիւն քո ծածկեսցես ։

Ո՞չ գիտիցես , քոյին յանցուած
Դըժնէացաւ քան զիմ կազմած .
Եւ թէ այնպէս դըժնէացաւ,
Արար և զայդ քոյին յանցուած ։

Արդ երթ խաղա դանդատանօք
Զանագորոյն ըըկիչ դահձօք ,
Անյուշ եղեալ ըղքոյդ վայրագ
Գազանութեանց ունել բողոք ։ ”

Այսպէս ասաց, և վերացաւ
Սըրտմըտութեամբ գոգցես մեծաւ․
Այլ զիմ դիմօք շառագնութիւն
Ընդ արտասուս խառըն մածեաւ։

# ԵՂԵՐԵՐԳՈՒԹԻՒՆ

## ԵՕԹՆԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ

---

ԶՔՐԻՍՏՈՍ ՄԵՂԱՒՈՐՔ ԴԱՐՁԵԱԼ

՚Ի ԽԱՉ ՀԱՆԵՆ

Եւ ճըշմարիտ լինի արդեօք
Թէ նորոգին ցաւք քո մեղօք ,
Ի՞նչ շատ լինէ քեզ միանգամ
Ջընջել ըզնոյն արեան գետովք ։

Բիւրուք վիրօք տեսար ցետեալ ,
Մերկամարմին խայտառակեալ ,
Եւ մեռանել բարձր ՚ի ձողին ,
Յոր դողացաւ երկիր սարսեալ ։

Բայց և այնպէս որք գըտանին
Անչափ անգութ պըղըընձաղի ,
Որ նորոգել մեղօք իւրովք
Զայսչափ ըզվէրս յանդըրգնեցի ։

Եւ մեք ինքնին, ով Միածին,
Եմք 'ի համար 'ի թիւ նոցին.
Աւա՛ղ անձին, եմ 'ի համար,
Խոստովանիմ ըզմեղս անձին ։

Ե՞ր քօղարկեմ զանձն իմ, աւա՛ղ,
Ոչ ինչ եմ այլ, մեղք և ձիւաղ,
Բեռըն դըժնեայ, որում և հող
Տանել յինքեան ծանրագանգաղ ։

Մեղան աչք իմ, մեղան շըրթունք,
Մեղան և ձեռք, ականջք սահունք,
Մեղան գործիք և ընթացից
Յանձին կորուստ իմ երազունք ։

Եւ ոչ իմ միտք անպարտական,
Այլ յօրինամեղ քան զամենայն.
Աստի ծագէ պատճառըն մեծ
Իմ բազմադէմ եղեռնութեան ։

Որոց պիտէր նա տիկնաբար
Իշխել տիրել վայելչաբար,
Ըզհետ չոքաւ կըրից իւրոց
Աղախնօրէն անարգաբար ։

Եմ յանցաւոր. այս է կարծոյ
Իսկըն բնութեան դատին իմոյ.
Եմ յանցաւոր. իմ են ոճիրք,
Իմ են վընաս, խաչ և մահ քոյ ։

Ե՞ս ինքն ուրեմն հանդուրժեցի,
Զի քո մարմին զանիւ հերձցի,
Եւ պարապետ նոյին եղէ
Որք ձաղկեցին արիւնալի ։

Ե՞ս ինքն անձի ապտակ 'ի քեզ,
Ե՞ս փետեցի զըլխոյդ ըզգէս,
Եւ ժահահոտ թըքով իմով
Շաղախեցի ըզքոյդ երես ։

Ե՞ս ինքն 'ի քեզ աքացեհան
Մ՝ինչ ընդ փայտիւ կայիր կործան,
Որպէս թէ ոչ շատ ինչ էր քեզ
Բեռն անկրելի փայտին գերան ։

Այդ խաչափայտ, ա՛յդ փուշք հիւսած,
Եւ ա՛յդ հեղոյք իմ են յանցուած.
Համաճարակ այդ վէրք մարմնոյդ
Իմո՛վ եղեն չարեօք մեղաց ։

Յո՞ր ոչ դիմէ 'ի լըրբութիւն
Մահկանացուացս յիմարութիւն.
Զի՞նչ ինչ մընայ յոր ձեռներէց
Նա ոչ լիցի յեղեռնութիւն ։

Երբ Տուղղիա կառավարէր,
Պատմի թէ զհօր դին աղճատէր,
Ինքնին վարեալ զանիւ կառաց
Յերես նորա անցուցանէր ։ [5]

Սժիր գործոյն ահաբեկեաց
Ըզկառավար քարշել ըզսանձ .
Այլ նա յահուր անկղխտացաւ ,
Յոր կառավար ահիւ սոսկաց ։

Պըրժնեկագոյն ես քան ըզսա
Առ 'ի դիւաց մըտրակեցայ .
Պըստրիկ ըզհայր արար կոխան ,
Իսկ ես զԱստուած զէիցս արքայ ։

Նա երբ զանիւ կառաց սայլին
Սըրսկեաց յարիւն 'ի հայրենին ,
Անշընչացեալ մարմին նորա
Իր անըղգայ ամենեւին ։

Այլ իմ ժըպիրհ ձեռք ժանտացան
'Ի կենդանի մարմին նորայն ,
Զինեալ 'ի փուշ և 'ի ձաղկիչ ,
Եւ 'ի բեւեռս արիւնահան ։

Ես 'ի յԱստուած յոլով անգամ ,
Նա 'ի ծընօղ և միանգամ .
Պարտիմք առ հայր մեծ գըթութիւն ,
Այլ Աստուածոյն է անպայման ։

Ըզնա ոխորտ գահն էր գործեալ ,
Զոր յանցանօքն արդէն կալեալ .
Սէ ինչ նըմա գոյր երկընչել
Թէ զհայր մահուամբ ձըգէր տապալ ։

Բայց ինձ արժան սոսկալ յանձին,
Յարդար ցասմանց անմահ Էլին.
Զամենայն չար ընդ իւր ձգէ
Սըրտմըտութիւն անմահ Էլին։

Զինչ ունէր հայր տըրուեալ դըստեր,
Բայց լոկ պիտակ զանուան ըստուեր,
Եւ զանցաւոր գանձուց ըղձյս
Զոր չարաչար ընկալեալն էր։

Որ ինձ անչափ մեղուցելոյս
Շնորհեաց կամաւ ըզմեծագոյս,
Եւ անկըշիռ գերագունից
Ետ բիւրապատկի գըրաւ և յոյս։

Վասն այն նախաձիր գործոց նորա
Փոքր է քան զիմ չարիս դըժնեայ,
Որչափ հաստուած քան ըզհաստիչ
Եւ փոքրագոյն ըստորակայ։

Եղո՜ւկ զինև. զի՞ է ապրել,
Զի՞մ ծընողաց զիս ծընանել.
Ինձ օդք և հողմ ընդէ՞ր ետուն
Ըզշունչ իւրեանց 'ի վայելել։

Ո՜հ, երանի՛, մեռեալ էր իմ
Մանուկ մատաղ յամըս նախկին.
Կամ առ օրին յորում տուան
Կեանք 'ի յանձնէս բարձեալ էին։

Ո՜հ, երանի՜, քան ըղ մահ մեր
Թէ լոյս արփւոյն անագանէր,
Որ իմոյին չարեաց մեղաց
Նաև նախկին դիտակ ընկեր:

Կամ թէ յաւէտ որ զիս երկնեաց
Լինէր յամուլ 'ի յարգանդաց,
Կամ ոչ ուրուք եկեալ 'ի լոյս
Յիմոց հաւուց նահապետաց:

Նա ոչ յայնժամ համարէի
'Ի քոյ դաշնաց գոլ 'ի սակի
Նաև ոչ արդեօք քոյդ ըսպանման
Հաղորդակից կըշտամբէի:

Ո՜հ. ո՞ տացէ այսմ հանդիպել,
Զայսչափ աղէտ ոչ այլ կըրկնել,
Զխա՛րդ հաւուց և գազանաց
Փափաքեմ արդ գէշ անկանել,

Նաև կամ մածնուլ յարձան վիմին
'Ի կովկասեան առապարին,
Զոր գանեցէ հիւսիս հարաւ
Նաև ցուրտ տարափ ձիւնաբերին:

Ըղքեղ կըրկին ես ցետեցից
'Ի փուշ 'ի քուք անդութ դանից,
Նաև ընկեցիմ քոյդ ըսպանման
Կըրկին պատճառ հաղորդակից:

Մինչ չև է իմ զեղծեալ անդրէն
Խնդրեմ, ընկլայց, խորք զիս առցեն,
Բացցի երկիր քինաթաքոյց,
Եւ կամ յորձանք զիս թաղեսցեն։

Նախ 'ի յաճիւն փոխարկեցայց,
Դի վրէժխնդիր բոցոյն կիզայց,
Երկնաստահան կանխեալ շանթից
Բան ըզգործել իմ յանցանաց։

Դի պատկերել միտք իմ սոսկայ,
Բանիցս յիշեմ եթէ մեղայ.
Յանդամ մարմնոյս և ոսկերաց
Դող և սարսուռ գայ ընթանայ։

Ընձամբ զանձն իմ գարշիմ ատեմ,
Ըզմեղս և զիս դատապարտեմ.
Եւ բողոքեմ, թէ ոչ հերիք
Ընդ իս ցասնուլ ես ժամանեմ։

Յիս դարձուցէք, դահիճք վայրագ,
Ըզձեր զայրոյթ ըզձեր դաստակ.
Օ՜ որ ինչ կըրէ նա 'ի յանձին
Իմ են չարիք, իմ են վրիպակ։

Ըսպանութեան ես արժանի,
Մի զդա պըրկէք 'ի ձող փայտի.
Որ այդպիսեաց չարժանաւոր,
Վասն իմ գործոց հի՞մ պատժեսցի։

Թէ զկեանս ուրուք բառնալ արժան,
'Ի յանցողէն բառնալի այն.
Խաչի արժան մեք գործեցաք,
Ոչ ինչ 'ի նմա մահու արժան։

Բևեռապինդ զիս պրրկեսջիք
'Ի յայդ գերան զիս կախեսջիք.
Զարգելում զիս 'ի տանջանաց
Օրս 'ի պատժոց զինև ածջիք։

Բազմագունից արժանացայ
Բան զոր ձեր աջ կարողանայ.
Իմ արժանեաց ես ինքն եմ քաջ
Եւ դատաւոր, նոյն և վկայ։

Օր աղաչեմս աղերսալի,
Ո՞վ թէ արդեամբք կատարեսցի.
Եւ մի ըղըան ցաւոյս նըշան
Ոք կարծեսցէ խօսք ցընդելի։

Զիք յիս նահանջ խոչ յապաղման,
Օենման մերոյ կազմ է սեղան.
Ըսպասէ զոհն աղետալի
Զեռաց ձերոյ անգըթական։

Թէ ժամ հասցէ յիմ պատուհաս,
Վրասցին բաղուկք, ո՛վ անգութ դաս.
Նիւթ եմք ձերոյ կատաղութեան
Պատկանաւոր արժանահաս։

Ա՜հ իմ չարիք ինձ դիւրագին,
Յանցուցելոյս տուք սակ պատժի.
Ահուամք պիտի քաւել ըղմահ
Արիւնապարտ յանցաւորի։

Բայց կամք Փրկչիդ չեն 'ի սոսին.
Շատ են պատիժք քո յատենին,
Ո՞չ զիս տեսցես ըստըրջացեալ
Ընդ գործեցեալ մեղըս անձին։

Յա՛ւ են ոճիրք իմ յանցութեան,
Նա՛ ոչ կարեմ ասել որքան.
Նա՛ ոչ զորքանն ասել կամիմ,
Ո՞չ և ջանամ, չեմ բաւական։

Որ միանգամ յաստիս առ մեզ
Կարէ ըղցաւ չափել լեզուօք,
Փոքր է իւր ցաւ, փոքր և պատճառ,
Նա՛ նիւթք ումպէտք ըղչընչենօք։

Զի՞նչ պէտք իցեն բանից շըրթանց,
Բաց են սիրտք մեր հանդիպակաց
Ամենատես աչաց Փրկչիս,
Զննել հայել մանրահայեաց։

Հայիս քեզէն, զի՞նչ այն սուսեր
Որ զիմ խոցէ սիրտ և զընդեր.
Ահուս պատճառ, հայցեմ 'ի քէն,
Ինձ եղիցի սոյն այս սուսեր։

Լոյծ ինձ շահ մորմոք սըրտիս ,
Մ՝եղայ , Փըրկիչ , խնայեա դու յիս .
Պատճառ մահուդ այն իսկ եղև ,
Զի կամեցար անխնայել յիս ։

Ձեռք զոր պարզեմ քեզ 'ի հայցուած ,
Որ 'ի սպանդ քո է ներկած ,
Եւ տակաւին ծորէ յիւրմէ
Բոսորաբուղխ արեան կաթուած .

Բայց և այնպէս զայն պարզեմ ես ,
Գիտեմ անշուշտ զի ոչ մերժես .
Ներումն հայցէ ինձ այն արիւն ,
Յոր թաթախեալ ըզնոյն տեսցես ։

ՎԱԽՃԱՆ

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. Զսէրն աստուածային բանաստեղծօրէն ձեւացուցանէ աստուածասէր Վերթողս, անձն և դէմս ընծայեալ նմին. և առ 'ի ցոյց անճառ մարդասիրութեանն զոր հրաշալոյս Աստուած առ մեզ քան զեւր արդարութիւն, գխմաձնաբար զՍէրն 'ի ներքս ածեալ, յաղթական երեւեցուցանէ զայն նմին իսկ ամենազօր Բարձրելոյն։ Բարբառ է սա և խղճ աստուածասիրացն կաթողնելոց, որպէս է և մերումս նորեկեան աստուածազգեցիկ Վերթողի ըղձաձայնութիւն 'ի հառաչելն առ սիրելին իւր Աստուած. " Որ միշտ յաղթես 'ի գթութենէ, և ոչ թշնամանիս. պարտիս յողորմութենէ, և ոչ պարտաւիս. բռնադատիս 'ի մարդասիրութենէ, և ոչ անգոսնիս. հարկիս 'ի բարութենէ, և ոչ հայհոյիս. առնուս 'ի սիրոյ, և ոչ բամբասիս։ " Նարէկ. ԾԲ։

2. Կապկողինն մի է յեօթն բլրոց նախնւոյն Հռովմայ, յորում կայր հոյակապ տաճար Արամազդայ դիցն 'ի պաշտօն հեթանոսութեան։

3. Պերիկլէս աթենացի, էր ճարտար անդրիագործ. որ 'ի հաճել զանգթութիւն փաղարեայ բռնաւորի ակրականդացւոյն 'ի Սիկիլիա, ձուլեաց ցուլ պղնձի, յորում արկեալ զմահապարտս, 'ի բորբոքելն հուր ընդ նովաւ, բառաչ ցլու լսելի լինէր 'ի ճչել տանջեցելոցն։

4. Բեսսեանք, ժողովուրդք էին Թրակիոյ կամ Միւսիոյ, ազգ գազանամիտ և աւազակաբարոյ բնակեալ առ Նէրոս գետով։ Իսկ Գեղոնք ժողովուրդք եւրոպեանն Սկիւթիոյ, վայրագք և գազանաբարոյք, որք զանձամբ արկանէին զմորթ գլխոց թշնամեացն, և զերիվարօք զմորթ նրանաց նոցա։

5. Տուղլիա, դուստր էր Սերվիոսի Տուղլիոսի, կին Տարկուինոսի գոռոզի՝ վերջնոյ արքայի Հռովմայ, որ զերիվարս կառացն անցոյց անգթութեամբ 'ի վերայ դիական հօր իւրոյ անկելոյ զճանապարհայն։

Г-41